

164

Народ Стэлларийе
насса улуканы

9 (~)

7-61



36 MAY 2011

1027

Դ-Ն.


Հ Յ Ա Յ Ի

ԻՆՉՈՒ «ԸՆՉԵՌԵՑԻՆ»
ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԹՈԽ ԵԲ ՀԵՅ ՄՏԸՆՈՐԸՆԵՆՈՒԹԵԵՆ

Զ Ա Խ Թ Ե Ի Ե Ր Ը

(Պատսախանի փոխարքն երկու խօսք)



Ամ Ա. Յարշտամեանի, Ճմ
1916

$\frac{g(\cos)}{h-61}$ - 11
Գ-Ն.

24 JUN 2005

ԻՆՉՈՒ «ԼԱԶԵՐԵՑԻՆ»
ՊԱՏԵՐԱԶՄԸ

2X046

ԹԻՒ ԵԲ ՀԱՅ ՄՏԵԽՈՐԾՎԵՆՈՒԹԵԵՆ

Զ Ա Խ Թ Ե Ւ Ե Բ Ը

(Պատասխանի փոխարքն եւկոյ խօսք)

027

Տպարտմ Ա. Քարաշանեանի. Շուշում.
1916

26 APR 2013

164

ВЛ

Առու ինտելիգենտի բնատուր գծերից մէկն
է եղել շարունակ՝ տապակւել «աջ» ու «ձախ»
հնոցների բովում, իրականութիւնից միշտ՝ շատ
կամ քիչ հեռաւորութեան վրայ ապրել, յանուն
«տիտղոսի» մարդկանց ու ամբողջ հոսանքներ խա-
րազանել:

Հերցէնը յատկանշանական չէ ոռւսական ին-
տելիգենցիայի համար, անգամ Զերնըշեւսկին մի
քիչ աւելի շատ շեղումն ունի կատարած դէպ ի-
րական կեանքը, ու դեռ մեր օրերին իսկ Բելինսկին
է մնում որպէս յստակ ներկայացուցիչը ոռւս մը-
տառըականութեան, որպէս ցայտուն առկայժողը
նրա իդիլիկ ու երազկոտ խառնւածքի: Նոր-նոր
է սկսել կեանքը իւր թելազրանքները սուր կեր-
պավ շեշտել ու մէկ-մէկ է, որ ոռւսական մտաւո-
րականութեան կուսական ընտանիքը սկսել է ծը-
նել Հերցէնեան տիպի խորհողներ, Հերցէնեան տի-
պի գործիչներ:

Եւրոպան միայն արտադրած արժէքներով
չէ, - թէ նիւթական ու թէ մտաւոր, -որ տարբեր-
ում է սլաւոնական հատւածից: Քիչ չէն դէպքե-
րը, երբ սահմանի այս ու այն կողմը ձգտման
մի կէտ են ունեցել, նոյնն են երազել ու նոյնը
փնտուել: Բայց անգամ և նման դէպքերում երկու
վայրերն էլ տարբեր ուղիներ են ընտրել, տար-
բեր միջոցների յարել ու տարբեր գէնքերով զինւել:
XIX-րորդ դարի շեմքին ապագայի ուսմկավար
հաստրակակարգի երազը ծնունդ առնւ: Նոր ու

մունքը համայն տիեզերքի մթնոլորաը վարակեց, վարակեց և մեզ. կէտ նպատակը նոյնն էր ամենուրեք, բայց... նորէն զարդարւած տարբեր ուղիների մի երփներանդ պսակով, էլի ծնւած՝ միջոցների ու զէնքերի սոսկալի ժխորից:

Ու եթէ այսօր, տասնեակ տարիներ յետոյ, եւրոպական մտաւորականութեան քաղաքական դաւանանքի ոչ սուր տարբերութիւններն անոյժ են հակամարտ ու անհաշտ հոսանքներ ծնելու. եթէ այսօր սահմանի այն կողմը ուամկավար մտքի տարբեր թեերն ընտելացել են ու գտել նպատակին մօտ նոյն յարկի տակ ապրել և միենոյն ընտանիքի անդամները համարել, ապա այգակս չէ, դժբախտաբար, մեզ մօտ՝ Ռուսաստանում, աւելին-այդպէս մտածելն ու այդ ուղղութեամբ գործելը յանցանք է մեզնում. Կուլտուրապէս անհամեմատ յետանաց Ռուսաստանն իւր սոցիալական կառուցւածքին միանգամայն անհամապատասխան գաղափարական շերտաւորումն է տւել, ստեղծել՝ «ուղղափառների» և «հերետիկոսների» բազմանդամ ու ծայր անհաշտ գերգաստան, որտեղ շատ յաճախ կրքոտ պայքարի ու սուր ատելութեան աղբւրն են ծառայում ոչ միայն սկզբունքների ու գործելակերպի խորը զանազանութիւնները, այլ և նոյն չափով յարգի են խնդրի էութիւնից շատ հեռու պարագաներն ու նրբութիւնները:

Անհաշտ են եղել ոուս ուամկավար մտքի նիւրկայացուցիչներն անցեալում, անհաշտ են նորա և այսօր. Շատ հազիւ է պատահել, երբ նրա այս կամ այն թից մէկ-մէկ համագործակցութեան

կոչն է լսւել. քիչ են դէպքերը, երբ միենոյն ուխտի մի ափից դէպ միւսը կամուը նետելու լուրջ ցանկութիւնն է հանդէս բերւել:

Այս նոյն պատկերն է եղել և հայ միջավայրում:

Ահա պատմական բախտորոշող փորձութիւններից մէկը, Եղակի՝ իւր առաջադրած ծանրակշիռ հարցերի նկատմամբ, հրամայական՝ անխտիր էլ բոլորի համար, —թէ նոցա, որոնք «միայն հացիւ կեցցեն» ու թէ նոցա, որոնք կենդանի են «և բանիւն Աստուծոյ»:

Ինչո՞ւ «ընձեռեցին» մեր յիշտակած խմբակներն այսօրւայ պատմաղէտ բաղխումը ժողովուրդների:

Մեր տրամադրութեան տակ եղած էջերում ու այն էլ մեր պայմաններում հարցին գէթ քիչշատ լիակատար պատասխան տալը սիանգամայն գուրս է հնարաւորութեան սահմաններից. Այսօր, երբ ոուս ինտելլիգենցիայի մի սոււր հատւածը մտաւորապէս իուկալ պայմանների տակ է ապրում անգամ հանրապետական ֆրանսիայում ու իռեզալ ճանապարհներով իւր մտքի արտադրութիւններն ազատ Զւիցերիայից դէպ Պարիզ տեղափոխում, ասել է թէ՝ տարօրինակ չը պիտի լինի, երբ նոյն պայմաններն աւելի խտացած ու խստօրէն բոյն գրած լինենց մշտական բնակավայրում, մեզ մօտ — Ռուսաստանում:

Ասենք միայն մի երկու խօսք: Թողնենք ոչ պակաս հետաքրքիր հարցերը, չխօսենք այն մտախն՝ թէ նա ինչո՞ւ «ըլնձեռեց»։ լոե՛ և նոյնպէս

այնտեղ՝ երբ ի՞նչպէս «ընձեռելու» մասին պիտ
խօսւի: Թողնենք հայ ու ոռւս «աղանդաւորնե-
րին» դեռ հին աստւածներին խռովնկ ծխել:

Պատերազմը սոսկալի խլրտումնէ առաջ բե-
րել ոռւս մտաւորականութեան շարքերում: Իւր
յայտարարման օրից սկսած մինչև այսօր նա ա-
ւելի ու աւելի է խտացնում մտածողութիւնների
երփներանգ գունաւորումը, աւելի խորացնում՝
ոռւս ինտելիգենտի ի ծնէ անհաշտութեան ու ա-
զանդականութեան հիմքերը: Այսօր զուք կը հան-
դիպէք ոչ միայն ծայրայեղ ասսիմիլատոր ու նւա-
ճողական անյազուրդ սինչերով տոգորւած հիւան-
դագին ուղեղներին՝ Սարուվէ, Բուլգակով, Բեր-
գեանվ, Էրն. իմպերիալիստների նոյնքան ստւար
շարքերին՝ Փոյզշտէյն, Մելգունով, Մալլակով,
Տրուբեցկոյ, «պատասխանատու օպպոզիցիայի»
ուժեղ ու պատկառելի բանակին՝ Միլիւկով, Ֆրիդ-
ման, Գրեգեսկու, Շինդարենվ. «Հայրենիքի»
(Խուսաստանի) հզօրութեան ջատագովներին՝ Տու-
գան-Բարանովսկիյ, Բերնացկիյ, Պանթեէնվ, Տվեր-
դախլերով. — այսօր զուք ականատեսներից էք մի
ուրիշ՝ աւելի գաղափարական ու ոչ պակաս պատ-
կառելի մտաւորականութեան բանակի մէջ տեղի
ունեցած անհաշտ մարտին, անվերջ շերտաւորման:

Ծառացել են իրար դէմ Պէխիանով ու Լինին,
Մասլով ու Սուխանով, Կրապուտկին ու Զերնով,
Գորկիյ ու Իվանով-Ռազումիկ, Չիրիկով ու Տալ-
նիկով, „Призыве” ու „Наше Слово”, „Лѣтопись”
ու „Современный міръ”...

Մենք միայն մի երկու անուն տեինք... Իսկ

երօք, մի վիթխարի բանակ, մի սոսկալի շփոթ:
Այսօր «իգմ»-երը փոխանակւել են «եց»-երով՝ մի
տարբերութեամբ միայն, որ վերջիններիս շարանն
աւելի է ձգւել, աւելի գունեղ դարձել: Ու միան-
գամայն իրաւացի է եւդ. Չիրիկովը, երբ լնդու-
նում է ոչ միայն նոցա գոյութիւնը, որոնք հան-
րածանօթ են արդէն մեր հայրենիքում՝ „ակտի-
վեցъ“, „оборонеցъ“, „пораженеցъ“, այլ և նոցա,
որոնք գեռ հանուրի սեփականութիւն չեն դար-
ձել, որոնց ձայնը գեռ խցերում է լուռում՝ „не-
успѣховеցъ“, „наплююевеցъ“... Վերջին տիտղոս-
ներն, ինարկէ, հեգնօրէն են արւած, բայց նոքա
իրականութիւնից շատ էլ հեռու չեն:

Բայց մեր նպատակը շատ է համեստ, ասե-
լիքը՝ շատ քիչ: Թողնենք Տուգանից մինչ Մտրու-
գէն եղած «պատասխանատու» ու «անպատասխա-
նատու օպպոզիցիայի» շարքերը հանգիստ: Թող-
նենք հանգիստ և նոցա, որոնք պատերազմը գեռ
չեն «ընձեռել» ու «ընձեռողների» հետ անհաշտ
կուի են զուրս եկել. սպասենք կուի ու ասելիք-
ների վախճանին: Մօտենանք միայն նոցա, որոնք
ընդունել են այսօրւայ գլխիվայրումը ու տես-
նենք, — ինչնու:

Ողուս մտաւորականութիւնն և ընդհանրապէս
ոռւս ժողովուրդը տոգորւած են եղել իրենց պատ-
մութեան ճամփին երեք շշշտած բարեմասնու-
թիւններով. — կոլլեկտիվիզմ, կոսմոպոլիտիզմ՝ ու
հակամիլիտարիզմ:

Այս յատկութիւնները տրւած են ոռւս ժողո-
վրդին ոչ ի ծնէ, ինարկէ, այլ ունին դէպ պատ... ու

թեան խորքերը տարածած իրենց ուժեղ արմատ-ները: Այդ մասին խօսելն այսօր դուրս է մեր նպատակից:

Նկատենք միայն անցողակի, որ, ըստ մեր կարծիքի, ոռու ժողովուրդն ապագայ իդէալական հասարակակարգի խանդավառ երկրպագուներից է եղել, որովհետեւ եղել է և մէկն այդ ուսմունքն հարազատողների վերջիններից: Ճիշտ է նկատւում Ն. Սուխանովի „Կէ կրիսի սոցիալիզմ“ գրքոյ-կում, որ քիչ հասակն առած օրիորդի ու դեռ տա-կաւին ջանձլ աղջկայ աչքում կուսական մաքրու-թեան խնդիրը նոյն արժէքը չունի: Վերջինիս համար այդ առաքինութիւնն աւելի է թանգ, քան առաջինի: Այդպէս կախարդիչ է և նորածունդ ուխտեալների համար իրենց ընդգրկած նոր վար-դապետութեան թովքն ու հմայքը: Թերեւս այս խնդրում դեր է կատարել և ոռուսական հասարա-կական կեանքին այնքան յատուկ հինաւուրց „միրէ“-ը:

Նա եղել է կոսմոպոլիտ՝ շնորհիւ իւր համե-մատական յետամացութեան ու տիրապետող ազգ լինելուն: Տէրը երկրի, նա չի զգացել դիւրազգաց ազգայնութեան ցաւերը, բայց, լինելով տիրապե-տող, նա ազգովին դեռ հասած չի եղել զարգաց-ման այն աստիճանին, որ կարողանար կուտու-րական արժէքների ուժեղ նախամնախնդիրը լի-նել, ընդհանրապէս կուտուրական մըցման ջա-տագովն ու մըցումից վախողը: Դեր է կատարել այս խնդրում և առաջին հանգամանքը:

Եւ, վերջապէս, նա եղել է հակամիլիտարիստ-

տական-հակաիմպերիալիստական, որովհետեւ բա-ցարձակապէս անկարող է եղել իւր յետամացու-թեան շնորհիւ այդքան տարբեր ու բազմաշատ հատ-ւածների ու բազմալեզու ժողովուրդների երկիրն որպէս իւր հայրենիքն ընդգրկելու, այդքան հըս-կայածաւալ պիտութիւնն անհամեմատ շատ փոքր ու յետամաց ուղեղում որպէս հարազար հողի գաղափարը պատսպարելու: Անհետեանք չի ան-ցել, թերեւս, այս կէտում և վերը յիշատակած եր-կու գծերի գոյութիւնը*):

Բայց շեշտելին անգամ աւելորդ է, որ այս բոլորը ժամանակին ու ժամանակի հրամայական թելադրանքների ծանրութեան տակ պիտ յեղա-ցըւեն, — կոլեկտիվիզմը պիտի քիչ սանձելի, կոս-մոպոլիտիզմը մեղմելի անկասկած ու միլիտարիզմն աւելի ուժեղանայ: Նման փոխ-յարաբերութեան պրոցեսին մենք ականատես ենք արդէն: Այսպէս վայրը, բայց ոչ յատէտ:

Խօսենք քիչ հանգամանօրէն:

Ստատիստիկայի նախահայր Կետլէն, ինչպէս յայտնի է, չէր ընդունում «պատահականութեան» գոյութիւնը: Նրան թւերը, մեծ թւերն եկել էին ասելու՝ որ կեանքում օրինականութիւն է ամե-նուրեք, հակաօրէն չէ անգամ ինքը «պատահակա-նութիւնը», այդտեղ էլ խօսողը, անգամ այդտեղ՝ անողոք օրէնքն է, պատճառի ու հետեանքի ան-խուսափելի կապի համատարած տիրապետողը:

*) Մենք ինդիր նեղ բացատրութիւնը տիրու ու թո-ղինք հանգիստ էկապիտալիզմն ու յարակից գաղափար-ները:

Եւ միթէ «պատահականութիւն» էր, երբ Թեմզայի ափերից մինչ իրանի տափաստաններն ու Ծագող Արեգակի երկրից մինչ Մայր-Հանրապետութեան մայրաքաղաքը մի խելացնոր օր գրեթէ ամենքն էլ երես թեքեցին երեկւանից, այսօրւայ անորոշ գիրկը նետւեցին, անգիտակ այն բանին՝ թէ վաղւայ պատմութիւնն նոքա այսօր՝ ինչպէս և ուր են կոռում ու կոփում:

Միթէ «պատահականութիւն» էր, երբ ոռուժողովուրդի հնաւանդ սրբութիւններն ու ոռու մեծ զաւակների պատգամած սկզբունքները յանկարծ կրակի բաժին դարձան մի օրում ու մարզիկ զնացին նոր ուխտի:

Վերջապէս «պատահականութիւն» էր արդեօք, երբ հայ մարտիկն ու հայ ուամկավար մըտաւորականը թողին իրենց կուի հինաւուրց ափն ու միւս ափն անցան՝ բիրտ ու անհարազատ, յանուն վաղւայ լաւ օրի՞ արին այն—ինչ չպիտի անէին, արին այնպէս ինչպէս չպիտի անէին:

Թւում է, թէ ոչ: Կատարւածը «պատահականութիւն» չէր, նա իւր խոր պատճառներն ունէր՝ յարգի գրեթէ ամենի համար և ուժեղ միշտ ու ամենուրեք, միայն թէ համապատասխան պայմաններն էին հարկիւր ամբարւած մտայնութիւնն ակտուէլ գարձնելու, ոհալիզացիայի ենթարկիլու այն, ինչ քչելն էին տեսնում, բայց բոլորը զգում:

Պատերազմը պատճառ չզարձաւ խաչ զնելու երեկւայ դաւանած սրբութիւնների վրայ ու վաղւան համար մարտիրոսազրութեան նոր խաչ կրելու: Ոչ, ամենին ոչ: Երեմնամեայ պատերազմի

բուն աղբիւրը Բոհեմիայի երկու եկեղեցիների աւերտումը չէին. այսօրւայ «երկրորդ ջրհեղեղի» պատճառը աւսարիական չարաշուք վերջնազիրը չէր Սերբիային. ուռւ ու հայ մտաւորականութեան գաղափարական աշխարհում տեղի ունեցած գլխիվայրումն ուղղակի հետեւանք չէր ազգերի աննախընթաց բաղիսումի: Այդպէսև և ոչ մէկը գոցանից: Աւերւած եկեղեցիները, քաւութեան նոխազ վերջնազիրն ու համատարած այսօրւայ բարուց լոկ գրդապատճառներն են կատարւած երևոյթների,—ու միայն այդքանը:

Այն, ինչ տասնհամկ տարիների ընթացքում էր ամբարւել. այն, ինչ դարերի արգասիք էր և այն, վերջապէս, ինչ ի ծնէ բնաւուը էր մարդուն ու միայն գարգացած ու խորացած պատճութեան ձանրին՝ նա իւր մասին պատեհ ժամին անխուսափելիօրէն պիտի լսեցնել տար, — այսօր, իրերի բերմամբ, ոյդ տեղի ունեցաւ պատերազմի շնորհիւ, վաղն այդ նոյնը պիտի կատարւէր մի այլ գրդապատճառի թելադրութեամբ՝ մի անզգոյն ճառի, մի բացձակատ որոշման, մի համեստ ընդվզումի:

Ու քանի գեռ հասարակագիտութիւնն այսքան շատ է յետամինաց ու այսքան ակնբախ անմշակ, մեր խօսքերից շատերը լոկ խօսքեր կը մնան, անընդունելի և ոչ համոզեցուցիչ բոլոր նիանց համար, որոնք գիտեն միայն փաստերին ապաւինելու ու փաստերի, թւերի լիզուն ըմբռնել: Բայց այդ մասին քիչ յետոյ:

Պատերազմի «ընձեռումն» իրօք անխուսա-

գելի էր ոռւս մտաւորականութեան համար, որովհետև նրա ազգային, նրա սեփական կուլտուրան լուրջ վտանգի տակ էր ու այդպէս էր շատ վաղուց, բայց վերջին տասնամեակներին միայն անգամ կոյրերին տեսանելի դարձած: Անվերջ սերունդների, անթիւ զոհերի, անդում ու քրտնաշան աշխատանքի գնով ոռւս մտաւորականութիւնը պատմութեան վիշտ ճանապարհին կուլտուրա էր ամբարել, որը գրեթէ կուլ էր գնում, որը տիրական դառնալ անգամ իւր երկրում չէր կարողանում: Մի սոսկալի ծանրութեամբ գերմանական միտքը նսաել էր սլաւոնական ինտելեկտուալ աշխարհի վրայ, ճնշում ու անողոք ճգնում էր նրան, առանց հարաւորութիւն տալու վերջինիս ազատ իւր թերելը թափահարելու, համարձակ ու խրոխտ թորչք անելու: Ռուս մտաւորականութիւնն մինչ այսօր էլ ստիպւած եղաւ տարբեր զունաւորումներով կրկնելու այն, ինչ գերման միտքն էր թելագրում, ինչ գերման գիտութիւնն էր հրահանգում: Հեք ցոյց տայ զէթ մի հատիկ գիտական դիսցիլին (իսկ ցոյց տւած դէպքում նա կատարելապէս անկարող է եղել իւր երկրի սահմաններից դուրս վարկ ու կշիռ ձեռք, բերելու), որի ծնողը, մշակողն ու առաջադրողը Ռուսիային եւրոպան չը լինէր, իսկ առաջին հերթին, ինարկէ, գերման ժողովուրդը: Ով ոռւսական համալսարաններում տարիների կեանք է մաշել ովք քիչ-շատ լուրջ հետեւ է ոռւսական գիտական մտքի աճեցման, նա խորապէս զգացել է ապահովարար այն մղձաւանջային մթնոլորտը, այն ինտելեկտուալ

ոստայնի խեղդիչ պայմանները, որոնց մէջ շարունակ իրեն շրջապատւած է զգացել թէ մեր համերկուացի հոչակաւոր գիտնականը, թէ համալսարանի լղարիկ գոցենտը, թէ սոսկական պարզ ինտելիգենտը: Մենդելէկը արտասահմանեան քիմիկոսների կարիքը զգաց: Մեջնիկովը իւր գիտական նորոյթների առաջ ճանապարհ բանալու դիտաւորութեամբ այցի գնաց Բերլին, հեզ ու գլխիկոր Կոխի ընդունարանը մտաւ ու, առանց արժանանալու անգամ տարրական բարեի, սպասեց հերթի, սպասեց Կոխի հաւանութեան: Տուգաննարանովսկին իւր «տնտեսական» կրիզիսների թէորիայի» մասին համարձակ միայն այն ժամանակ խօսեց, երբ կանխօրէն Զոմբրարտի հաւանութիւնը ստացաւ, երբ այդ հաւանութիւնը ստանալու համար նա մայրենի լեզով գրած աշխատանքը գերման լեզով տպագրութեամբ լոյս ընծայեց: Մարքսի «Կապիտալի» անվերջ ծանօթութիւններից մէկում լոկ թեթևակի յիշատակումը շատ թեթև խնդրի առթիւ (երկաթուղային գծերի) ոռւս տնտեսագէտ ֆելեզովին ոռւս ուսանողի աշքում աւելի հմայք տւաւ ու, անգամ Մ. Կովալենկովսկու պէս «երես առած» գիտնականի փառասիրութիւնն այն ժամանակ միայն շոյւեց, երբ իւր մասին եղած եւրոպական որևէ գիտնականի —մի Սպինսէրի թէ մի Տարգի՝ այդ միմնոյն է— յիշողութիւնը հանդէս բերւեց:

«Թանկագին կը Տոլստոյ, խորը գնահատելով ձեր աշխատանքները, բախտաւոր ենք ողջունելու «պատերազմ և խաղաղութեան հեղինակին»*): Ան-

*) „Русскія Вѣд.“, 1916 թ., № 102.

ցած մայիսին, երբ սուստկան մամուլի ներկայաց-
ցուցիչներն այցի էին գնացել դաշնակիցների եր-
կըրները, նրանց մէջ էր և կոմս Ա. Տղուտոյը, ու
ին Լոնդոնի սուֆրաժիստկանները, ընդունելով
իսկական Տղուտոյի տեղ, դիմել էին նման նամա-
կով: Տգէտ չեն Լոնդոնի սուֆրաժիստկաններն ու
վազուց չէ, ինչ Ռուսաստանի մեծ վիպասանը
իւր մահկանացուն է կնքել, բայց մարդկանց յի-
շողութիւնը թոյլ է մեր երկրի նկատմամբ,
թոյլ՝ անգամ նրա մեծ զաւակների, անգամ նրա
մէջ տեղի ունեցած խոշոր գէպերի: Ու սա
կուրիոգ չէ: Կեանքի վայելքներից յոզնած
ֆրանսունու ազատ ժամերը զարդարող ուռւս վի-
պասանը չէր կարող իւր երկիրն օտարի մտաւոր
կապանքներից ազատել, որովհետեւ նա ինքն ա-
զատ չէր այդ կապանքներից: Եւ ինչու, վերջա-
պէս, անուններ յիշատակել, անհատների կը ած
հարւածները վերցիշել: Փիլիսոփայութիւն, տնտե-
սական քաղաքականութիւն մի շարք ձիւղեր,
ստատիստիկա, իրաւունքն իւր ամբողջ բարդու-
թիւնմբ, բժշկութիւն, բնագիտութիւն, քիմիա ու
գիտութիւն որ ձիւղն ուզում էք վեցըք՝ տի-
րապետողը մեզ մօտ եւրոպան է, ճիշտը—Կան-
տերի ու Վունդերի, Հեկելների ու Օստալդների
ու Ժեղ հայրենիքը:

Պէտք էր ազգային կովտուրան վերահաս
վտանգից ազատել, հարկաւար էր սեփական շա-
հերը պաշտպանել: Երկուսն էլ նոյնութիւնմբ հա-
հանգիչ էին՝ թէ գաղափարական մոռենան ու թէ
անձնական շահը, երկուսն էլ սերտ ու հաշտ զու-

զորդւած: Մենք կը խնդրէինք մեզ թիւր չ'հաս-
կանալ: Սա կոի էր չէ թէ «կուլտուրայի» գէմ
ընդհանրապէս՝ որի երկրպագուներից է եղել միշտ
ուռւս մտաւորականը. սա տապալումն էր ոչ այն
մեծ ճշմարտութեան՝ որ «կուլտուրսն» ինքնին
գերազանցօրէն անհայրենիք արժէքներից է տա-
կաւին, այլ սա ընդվզումն էր ընդդէմ այն մերկ
իրողութեան,— որ Ռուսիայում թիւստարած գեր-
մանական միտքը հանդէս էր գալիս որպէս մի
ազգի հզօրութեան արգասիքներից՝ հանդէպ մէկի
ազգովին թուլութեան, որ նա, եթէ վաղն, իրօք,
պիս հրաժարւէր սահմաններ ու երկրաբաժա-
նութիւնը ձանաչելուց, այդպէս չէր այժմ, այսօր
նա ուժեղ նախանձախնդիրն էր իւր ազգային ծա-
զումի, իթամն իւր սեփական տիրապետութեան: Մեր գարում «կուլտուրան» լաւապէս ազգային է
դեռ, նա զիտէ հայրենիք ու սահմաններ ձանա-
չել նա զիտէ ուժեղի ու թոյլի խոցով մտայնու-
թիւնը ծնել ու որպէս այդպիսին՝ ինքնին ազրիւր
հանգիսանալ բողոքի, խորապէս պատւաստել ա-
զատագրւելու հմայիչ գաղափարը:

Այդ մտքով այսօր տիրական էր թէ ըո-
ղոքն ու թէ ազատ լինելու տեսչն ու պատե-
րազմը, որպէս մէկը հաշւեյարդարի միջոցնե-
րից, թերեւ և անընդունելին, հկաւ, լինելուց
յետոյ, չէ թէ պատճառը հանդիսանալու, այլ
լոկ հրահրողը, զրդողը այսօրւայ գաղափարա-
կան խունապի: «Բնձեռումը» կուի իւր պո-
տենցիալ զրութեամբ գրյութիւն ունէր արդէն,
նա երբեւ պիտի աւելի իրական ու շօշափելի դառ-

նար ու դարձաւ, դժբախտաբար, այսօրւայ ձեռվր
իսկ կոիւը բարդ ու յղկւած Գերմանական-
«նաւալիզմի» դէմ, ընդհանրապէս «քաղաքական-
գերմանականութեան», միթէ պակաս յարգի էր
ուսւ մտաւորականութեան մօտ: Իւր քաղաքական-
կառուցւածքով ու իւր քաղաքական պատմու-
թեամբ—վերջին յիսնամեակում մանաւանդ—գեր-
ման պետութիւնն եղաւ միշտ վանող ու խեղդիչ:
Նա չը պատգամեց իւր հայրենիքին ու համայն-
մարդկութեան և ոչ մէկն այն սրբութիւններից՝
որոնք դարեր են թեակոխում, որոնք սերունդներ
են դէպ Գողգոթայի գագաթն ուղենորում:

Աղէքսանդր Մակեդոնացին աշխարհներ գրա-
ւեց, բայց և իւրաքանչիւր երկրի նիստն ու կացը,
վարքն ու բարքը յարգել իմացաւ. Երինգեան տի-
եղերքն երեք անգամ տիրապետող Հոռմլ հրահան-
գողն եղաւ աշխարհի հչ միայն բոռնցքի, այլ և
«քրիստոնէական հաւատի», «հոռմէական իրա-
ւունքի» ոյժով. մեր պատմութեան մեծ աշխար-
հակալ նապոլէոնն իւր բանակները նետեց գէպ
Եւրոպայի ու Ռուսիայի խորքերը յանուն «զստերը-
հանրապետութիւնների», յանուն ազատութեան-
ու հաւասարութեան կախարդիչ գաղափարների:
Մենք հմայւողներից չենք հզօրների «ազատական-
տեհնչերով», բայց և գիտենք տարբերել Վիհել-
մեան «գերմանական Աստծուն» սոսկական «Աստ-
ւածանից», գիտենք զանազանել մեր օրերի Պրու-
սիան «օրինականութեան ոգուաւ աւանդական վա
Ալբիոնից, «Յայտագրի» «յեղափոխութիւնների
«կոմմունայի» ծննդավայր Պարիզից:

Ինչու հեռուն գնալ: Ո՞վ իւր կոշտ ձեռքը
մեկնեց Աղէքսանդր II-ին 1863 թւի լեհական
շարժումների օրերին. ո՞վ ուժեղ պատւարը հան-
դիսացաւ բիւրոկրատիական թուլասիրտ ու տա-
տանւող շարքերին ուսւ ժողովրդի բախտորոշող
1905 թւականին. ո՞վ ի տես համայն մարդկու-
թեան ողջագուրեւից «Կարմիր սուլթանի» հետ ու
սերտ դաշինքը կնքեց «ազատասէր» Լիւթերի ու
«արիւնուուշտ» Մահմետի միջին: Ու անգամ այսօր,
երբ գերազանց խարեթայութիւնների ու ողջակի-
զող «խոստումների» օրերն ենք ապրում, տեսէք
թէ ինչ մտորումներով է տարւած գերման գի-
տունը: «Խուսաստանը,—գրում է Վալտեր Բլեկը ✓
«Ոչնչացումը Անգլիայի համաշխարհային տիրա-
պետութեան և ուսւական ցեղարիզմի Երրեակ
Խաչնակցութեամբ ու իսլամով» վերտառութիւնը
կրող ժողովածում),—կառավարելով պարլամեն-
տական հիմունքներով, կը լինէր մի անձայր գրժ-
բախտութիւն, որքան իրեն, նոյնքան էլ ամբողջ
Եւրոպայի համար: Այդ գէպքում վերջինս կեն-
թարկւէր բոլոր գժբախտութիւններին, որոնք
ծնունդ են կրքերի, ոչ մի կարգաւորումը չհան-
գուրժող քառակի: Նա կը նմանէր նոցա, որոնք
նստում են վառոգով լիքը պարկի վրայ»¹⁾: Ուրեմն,
ասել է թէ՝ «վառողը» չկայ (sic!) այնտեղ, որտեղ
միահեծանութիւնն է տիրապետում, որտեղ բոռնց-
քըն է թագաւորում... Բայց այս տողերն էլ աւե-

¹⁾ Քաղ. Մ. Կովալենկովու «Международная война
и ее въроятные послѣдствія» յօդւածից.—«Исторія на-
шего времени», вып. тридцать первый, եր. 48.

Մի են նշանակալից հէնց նրանով, որ այսօր իսկ նոքա գալիս են առանց զարտուղի ձանապարհների դէպ Ռուսիան տածած ուժեղ հարևանի «աւանդական բարեկամական» քաղաքականութեան յըստակ իմաստն իւր ամրող մերկութեամբ ի տես ամենի ցուցահանելու, աներկբայիլի դարձնելու այն ինչ 1905 թւի «խաղաղ» օրերին Հոհենցոլցիրեան տոհմն էր մեր հայրենիքի հզօններին առաջարկում, — երբ կայանն երկրի ներսումն էր, ու ինչ այսօր՝ կուի արիւնոտ շրջանում, գերման գիտումն է որոճում, — երբ այդ կայանն ուրիշ տեղ է արդէն։ Մի տարբերութեամբ միայն։ Երեկ նու այդ յաւակնութիւն ունէր անելու առանց իսլամի, իսկ այսօր—իսլամով հանդերձ. երեկ՝ զատզատ ընդդէմ իւրաքանչիւրի, իսկ այսօր միանգամից ընդդէմ բոլորի։ Բայց լինենք բարեխիզմ։ «Երբ արտաքին քաղաքականութեան մէջ,—ճշտորէն նկատում է շնորհալի երիտասարդ գիտնական-հրապարակախոս Ն. Սուխանովը, — խօսում են միջամտութեան մասին ներքին գործերի մէջ, այդ դէպքում ընդհանրապէս հասկացուում են միայն իրեն խօսողի ներքին գործերը. ահա հէնց այժմ էլ մեր աջ մամուլում տարւում է ուշագրաւ կոփւ «գաշնակցական» ազգեցութեան դէմ մեր աւանդական կարգերի վրայ։ Մեր ազգեցութիւնն ուրիշի գործերի վրայ այլ կերպ է գնահատուում¹⁾։ Այդպէս չը հասկանանք ու այդ կերպ չը գնահատենք. Զը սոռանանք՝ որ նման հարցերում entente cordiale աշխարհի հզօնների մէջ միշտ անպա-

¹⁾ Տես „Անտոպիս“, մայիս 1916 թ., էր. 147.

կաս է եղել ու գէթ թեթևակի շեշտենք, որ այդ նոյն կերպ վարւել է և Ռուսիան կենտրոնական գերմանական պետութիւնների նկատմամբ—Պրուսիայի ու Աւստրիայի, — վերջիններիս մէջ թագաւորող զինասարհաներից նեղ օրերին, ու, թերևս, առ է և պատճառներից մէկն այն վատ համարումի, որն սենի մեր հայրենիքը եւրոպայի գեմոկրատիայի աչքում։ Բայց անկասկած է, որ գերմանական կռուփին աւելի է վատ, որովհետեւ աւելի է ուժեղ։ Նա «մոնարխիստական պրինցիպի» ու «պատմական շկոլայի» հայրենիքն է ոչ միայն տեսականօրէն, այլ և պետական սահող կենանքում։ Ոչ մի տեղ արսովիւտիզմին ու սեփական ազգի յետադէմ «ոգուն»¹⁾— ոչ ի պաշտօնէ, այլ միանգամայն անկեղծօրէն—ժողովրդի տարբեր խաւերի կողմից այնպիսի ներրողներ չեն ծօնւել, ինչպէս այդ արւել է Գերմանիայում ու արւել՝ Բիսմարկ-ների ու նոյն չափով երկրի պատկառելի ու համաշխարհային հոչակ վայելող մտածողների կողմից։ Ու մասնաւորապէս և ոչ մի երկիր պետականագէտների այնպիսի վիթխարի բանակ չը տւաւ, ինչպէս կրկին վերջին շրջանի նոյն Գերմանիան, բայց տակաւին տողորւած յետադէմ սկզբունքներով, վերստին նւիրւած ռեսլիցիոն պրուսականու-

¹⁾ Մենք այստեղ ինկատի ունինք իրաւագիտութեան մէջ գոյութիւն ունեցող «պատմական պարոցի» պաշտպանած ժողովրդական ոգին», որը իւր գրական կողմերով հանդերձ ուժեղ կռնսերվածի զորութիւններից է եղել և որը բացաւել է «բնական պարոցի» կողմից։ Ուշագրաւ է և այն, որ «պատմական պարոցի» հայրենիքը, ինչպէս ասացինք, Գերմանիան է, իսկ «բնական պարոցինը»—Փրանսիան։

թեան։ Անգամ աշխարհահոչակ գերման սոցիալ-դեմոկրատիան իւր կուռ շարքերով ու անւանի վարդապետներով անկարող եղաւ ոչ միայն համեստ շտկումն մտցնելու—այն էլ եւրոպայի ծոցում—այնքան յստակօրէն արտայայտած գերման դուալիստ պետական սիստեմայի մէջ, այլ և գերազանցօրէն իմպոտենտ հանդիսացաւ մինչև իսկ պրուսական արխայիկ ընտրողական իրաւունքի մէջ որևէ փոփոխութիւն առաջ բերելու: Հանուր Գերմանիայի համար գոյութիւն ունեցող ընդհանուր ընտրողական իրաւունքը ծնունդ առաւ միանգամայն անկախ երկրի դեմոկրատիայի կամքից նա եկաւ ի վերուստ, եկաւ գուշնակցական պետութեան ուայխստագի ուամկավարացման վնով կայսրութեան բողկացուցիչ մասնիկներն ի մի բերելու, եկաւ Պրուսիային այդ դաշնակցութեան մէջ առաջնութեան իրաւունքը վերապահելու: «Պետութիւն ստեղծելուց յետոյ, — զրում է Էնգիսը, — քաղաքականօրէն ազգային խնդիրներն կայացան բոլոր անջատողական ու ապակենտրոնական ձգտումների դէմ մղւած կռւի մէջ; Կորւ վելքերի դէմ (Հաննովերեան թագաւորութեան վերականգնման կողմնակիցների), «կուլտուրական կռիւ» կաթոլիկական կենտրոնի դէմ, որը դաւանական խժդժութիւններ էր մտցնում ազգի մէջ, ձգտելով թուլացնել ազգային հաւաքականութեան ոյժը, որպէս պետութեան, յօդուտ առանձին թագաւորութիւնների սեպարատ ձգտումների, իսկ այդպիսով էլ յօդուտ կաթոլիկ հոգեորականութեան քաղաքական ազգեցութեան: Ազգային կուլտուրական

խնդիրը հասկացւում էր ներքին պետական իմաստով (ընդգծումը հեղինակինն է: Դ. Ա.): Նա կայանում էր՝ ազգաբնակչութեան այլացեղ մասերի, կոթարի բռնի պրուսացման, լինական շըրջանների ու Շլեզվիգի գերմանացման մէջ¹⁾:

Այսքան բարդ ծրագիրը կարելի էր ի կատար ածել միայն փոքրիկ զիջումների գնով, ու մարդիկ այդ «զիջումներին» էլ գնացին ու... չըսխալւեցին: Լուց «կաթոլիկ Հոռմը», այնքան վարպետորէն իւր բնումը խեղգւեց պետութեան տարբեր մասերի «սեպարատ օձը»²⁾, երկրի մէջ պրուսացման գործն աւելի թափ ստացաւ, և, վերջապէս, գերման սոցիալ-դեմոկրատիան բազմեց... ուայխստագի նախագահութեան շարքերում³⁾: Անգամ Ասիայի նուժագը, հակապիտական ու վաշկատուն թուրքը, իւր «յեղափոխական» ոստու-

¹⁾ „Современ. міръ“. 1915 թ., № 4, եր. 75—76:

²⁾ Այս տեսակէտից բաւականին հետաքրքիր է Գերմանիայի օրէնսդրական մարմններից երկրորդ պալատի, Պետական Խորհրդի, կազմը: Զայները Պրուսիայի ու միացած կիսանկախ թագաւորութիւնների մէջ այնպէս են բաշխւած, որ վերջիններս իրենց ձայների քանակով չեն կարող տապակել Պրուսիային, իսկ Պրուսիան էլ, ընդհակառակը, մենակ անկարող է իր ճայների քանակով սոցական կանունը: Այս «իրաւաբանական հանելուկի» ամբողջ նպատակն է եղել սահմանը թէ Պրուսիայի կլանող ցենտրալիզմն ու թէ նացածների վտանգաւոր սեպարատիզմը:

³⁾ Ընդհանրապէս գերմանական իմպերիալիզմի ազգեցութեան մասին ու մասնաւորապէս գերման սոցիալ-դեմոկրատիայի վրայ տես—Թնձիսъ. „Война и германская социал-демократия“, Москва, 1916, գլ. VI և A. Майский. „Германия и война“, Москва, 1916, գլ. 7:

տումնի երով մի քիչ պղտորեց ռուս մտաւորականի միտքը, պահ մի վրդովից նրա անդորրը, — իսկ այդքանն էլ, այս, այդքանն էլ վերջին յիսնամեակում անկարող եղաւ անկ մուսիայի նկատմամբ մարդկութեան կուլտուրայի այժմեան որսրանը — Գերմանիան։ Իսկ միթէ այդ կրթիչ ոգեսրութիւնը կարող էին բերել պարլամենտական «սոցիալիստական» ձայների քանակն ու ս.-դ.-ական ընտրողների միլիոնաւոր քանակը։ Լսենք մի անգամ ևս (զգում ենք, աւելորդ) գերմանական սոցիալիստական «փոքրամասնութեան» պարագլուխներից՝ Լառուֆենբերգին։ — «Գնում են քնելու (ընտրողների մասսաները, որովհետեւ արդէն իրենց «քւէն տեկլ» են ս.-դ.-այի ներկայացուցին, որն աշխատաւորութեան շահները «պաշտպանում» է ուայխստագում։ Դ. Ն.), քաշում են վերմակը մինչև ականջներն ու երազում հրաշտագեղ ելորագոփի մասին, որը պիտի մատուցեն իրենց ներկայացուցիչներն երջանկութեան օրւայ մօտալուտին, երբ մեծամասնութիւնը պարլամենտում արդէն իրողութիւն կը լինի և ընդունւած խորհրդաւոր որոշումը — արդիւնաբերութեան միջոցների համայնացման մասին։ Միայն ժամանակ առ ժամանակ մասսաներն արթնանում են — հինգ տարին մի անգամ։ Զւարթ երեսներով գնում են նոքա դէպի ընտրողական տուփերը, ձգում թերթիկների կտորները տպագրւած թեկնածուների անուններով ու գոհ հաստատում, որ նորից նման թերթիկների քանակն աւելացել է նկատելի տուկոսով, ու նորէն գնում քնելու հանգիստ գիտակ-

ցութեամբ, որ պարտքը փայլուն կատարւած է»¹⁾։ Այս կիրթ ու յդկւած «ձայնատու մասսան», իթէ միայն ընդունակ էր միջազգային և ոռուական զեմոկրատիային վարդապետելու կուի նոր ու մշակւած միջոց՝ այդ հինգ տարով քնիկն էր ու մի անգամ մի ժամով թերթիկների համար արթնացումը միայն, իսկ այդ հեռու էր արդէն իսկական էլեկտրագոփի ճանապարհը հարթելուց։

Գերմանիայի ոչ միայն ինտելեկտուալ գաղութն էր Ռուսաստանը շատ վազուց ի վեր, նա էր նաև նրա քաղաքական կառուցւածքի ակամայ ստրուկը, ակամայ ընդօրինակողը։

Այդ այդպէս էր, որովհետեւ ոռու գեմոկրատիան ընդհանուրապէս անոյժ էր նման դէպքերում ծագում չունեցող Միխելի հանդէպ։ Մինչև իսկ «ներքին գերմանացու» պէս բնական երևոյթն ու արտառոց հասկացողութիւնը գալիս էր շօշափելի մեծութիւն դառնալու մեր հայրենիքում ու մի աւելորդ շեշտով ևս ընդգծելու պրուսականութեան ազգիցութիւնը մեր ապարախտ երկրի բախտի վրայ։ «Զարմանալիք է միթէ, — նկատում է մի ուրիշ տեղ նոյն Սուբանովը, — որ լեզվի պատկերաւորութեան ու ազատութեան համար մեզ մօտ, միաժամանակ աջից ու ձախից, հնարեց մի իւրատեսակի հասկացողութիւն «ներքին գերմանացու» որպէս յանցաւորի այն ամենի, ինչ հաձելի չէ մեզ»²⁾։ Կասկածից գուրս է, որ այդ երկու

1) Էնցիս. իօիդ., եր. 79.

2) Сухановъ, Ник. „Наши лѣвые группы и война“. ПГ. 1915, եր. 10.

խօսքերի տակ անհեթեթութեան ու սկզբունքային հաննիրալութեան մի խոշոր մաս կայ թագնւած, ըայց անառարկելի է և այն, որ նոքա իրենց ոչ լայն, այլ նեղ, շատ նեղ իմաստով՝ պարունակում են և ձշմարտութեան որոշ տոկոս։ Միթէ կարելի է հաշուի չառնիլ այն հանգամանքը, որ Գերմանիան, շնորհիւ իւր բացառիկ դրութեան մեր հայրենիքում, կարողացել է՝ բիւրոկրատիական կազմի խայտառակ իւնկերների, աւատական իշխանների ու մինիստրութիւններում և դեպարտամենտներում բազմած տիրահնչակ հերոսների մի ստար բանակ տալ, որը ձեռք-ձեռքի և ուխտութիւնների նման տարրերի հետ եկել էր թէ վերջիններիս շարքերը խտացնելու ու թէ նոցակորովը բարձրացնելու։ Այդ տարրերը միշտ մի-մի պատուհաններ են եղել ոուս ինտելիգենցիայի, ոուս ժողովրդի գլխին։ Իւրաքանչիւր մի վարանոտ քայլ դէպ յառաջ, ամեն քիչ-շատ համարձակ խօսք յօպուտ երկրի յառաջադիմութեան, ինքնին հակացոյց է եղել այդ ու ու կուռ շարքերին, ազգանշանը՝ նրա սոցիալական արբապետութեան պատւանդանի ճեղքան և այդու՛ արժանի հականարաւածի՝ ուժեղ ու անողոք։

Խուս ոամկավար մտաւորականը կարող էր ներշնչւել այն հաւատով, —որ այս պատերազմը է պատերազմ և դոցա դէմ, որ նարաւոր յաղթանակը զրում, թերես, և պարաւութեան շեփորը լինէր երկրի ներսում ամուր խարսխած այդ խայտառակ ոստայնի։

Պատճառների շարքին պիտի դասել անկուս-

կած և միլիտարիզմի հաւանական թուլացման խնդիրը։ Այսօրը կառւցկին համարում է «հասարակ մրցումն փոխազարձ զինումի» ու թւում է, որ ճիշտ է նա մասամբ։ Սիսալ կը լինէր ու անարդարացի միանգամայն պնդելը, թէ դարուս այդ յատկանշանական տինդով տառապում է միայն գերման պետութիւնը, որ տիեզերքի մնացած հզօրներն անմեղ են այդ խնդրում ու միայն ողջակիզում են միլիտարիստական բիւջէնների հնոցներում՝ ստիպւած, շնորհիւ ուրիշի մեղքի։ Այդ ըստ ամենայնի սիսալ ու միանգամայն անարդարացի կոչ ու կանչերի միտումաւորութիւնն ապացուցելու համար բաւական է միայն ու միայն անզիփական ֆինանսիստ նիտաիի ուսումնաւիրութեան մէջ („Основные начала финансовой науки“) զետեղած աղիւսակը ձեռքի տակ ունինալ, ուր մանւակրկիս ջանասիրութեամբ հաւաքած ու զասաւորւած են եւրոպական այն բոլոր պետութիւնների բիւջէնները, որոնք բիւջէ են կազմել, որոնք գենք են կրել ու զինւելու իրաւունքն ունեցել։ Այդ աղիւսակը մի քանի գարեւըն է ընդգրկում ու անառարկելորէն ապացուցում, որ սպառազինման յատկացրած բիւջէական համեմատական յարաբերութիւնը տարրեր պետութիւնների մէջ գարեր ի վեր շարունակւում է զրիթէ նոյնութեամբ և զրիթէ նոյնութեամբ էլ XX-րդ դարի գնները բաղխում։ Միշտ բոլորն են զինւել նոյն թափով ու զրիթէ միշտ էլ նոյն սոկոսական յարաբերութիւնն է մնացել պետութիւնների մէջ միլիտարիզմին յատկացրած բիւջէական մասերի

Նկատմամբ: Ով մի անգամ արդէն շատ է նւիրաբերել այդ բազմազիւանի հիդրային, նա և՛ ձգտել է այդ շատը ուրիշների նկատմամբ անխախտպահել ինչ գնով ուզում է լինի: «Միլիտարիզմի աճեցման ընդհանուր նշանակութիւնը գնահատելիս,—զրում է անգամ ն. Կարէկի պէս պատմաբանը, որը, ասենք ի միջի այլոց, շատ է տրամադրի միլիտարիստական ցաւով տառապողները մէջ առաջին տեղը «գիտականօրէն» վերապահել Գիրմանիային, իսկ յետոյ արդէն դատի կանչել ուրիշներին,—հարկաւոր է հաշվի առնել և այն, որ այդ աճեցումը կատարւել է մօտաւորապէս գրեթէ նոյնանման չափերով բոլորսվին տարբեր կուլտուրական մակարդակի ու տնտեսական զարգացման տէր երկրներում: Դրանով միլիտարիզմի զարգացումը ցայտուն կերպով զանազանում է արդիւնաբերական ոյժերի էւոլյուցիայից, որը կատարւել բոլորովին ոչ նոյն թափով ու նոյն չափերով տարբեր կուլտուրական ու տնտեսական յառաջադիմութեան ենթակայ երկրներում¹⁾: Այստեղ միայն փաստն է ընդգծւած, որից անկարող է եղել խուսափել և նա ինքը պ. Կարէկը: Իսկ նետեեալ տողերը գալիս են պերճախօս կերպով ալացուցելու, որ մեր պնդումները լոկ նոսքեր չեն, այլ ինքը կեանքն է, սոսկ մերկ իրականութիւնը: «Լոյդ Զորչը,—զրում է Սուխանովը,—ուղիղ մի տարի պատերազմից առաջ յայտարարեց պարլամենտում, որ զարմանալի իրողութիւն

1) Կարեևъ, Н.— „Ист. Зап. Евр.“, т. VI ч. I, եռ. 126—127.

է այն, որ 1913 թւին Անգլիան ծախսել է իւր պատերազմական նաւատորմիզի վրայ աւելի, քան ծախսել են իրենց նաւատորմիզների վրայ 1886 թւին բոլոր պետութիւնները միասին վերցրած, հաշւած դոցա հետ և իրեն Անգլիային»¹⁾: Բայց չէ որ մոռանալու չէ, որ Անգլիան 1913 թւին այն երկիրն էր, որտեղ «պարտադիր զինւորական ծառայութիւն» էր բացակայում...

Պարզ է: Ոյժն է իրաւունքը և իրաւունքը՝ ոյժ—այս գործուլայի ծնունդն է սա, իսկ այս նշանաբանին անդաւաճան աշակերտել են այսօրւայ թէ «հրեշտակն» ու թէ «սատանան»:

Բայց անկասկած է և մի ուրիշ հանգամանք: Օկուփի էլեմենաները ժամանակակից պատերազմի մէջ է մասնակցող ազգութիւնների բարոյական ու մտաւոր միջոցների կատարեալ ամբողջութիւնը: Ամբողջ հզօրութիւնը ժամանակակից ցիւլիզացիայի, բոլոր տեխնիքական կատարելագործութիւնները, զգացողութիւնները, բնաւորութիւնները, խելքը, կամքը և բարդ հսկերանական ապրումները—այստեղ հանդէս են գալիս որպէս անհրաժեշտ գործօններ»: Թւում է մեզ, թէ իրաւացի է միանգամայն Ա. Մորսկոյը, միլիտարիզմի ոգին հարազատած ու ճշորէն ըմբռնած հեղինակը, երբ նա վերջինիս շրջանակները մեր դարում այդ չափով լայնացնում է արդէն և հեռու մնում

2) Տես Ն. Առևիանով «Россия и ее союзники», «Лѣтопись». 1916, № 5.

1) Морской. Военная мощь России. Петроградъ, 1915, եռ. 139.

քանալ աղիւսակներից, անզօր ու անոյժ սովորական թւերից: Իսկ այդ մտքով, այդքան լայն իմաստով ըմբռնած դէպքում, իրօք որ Գերմանիան մի զարհուրելի, աննախընթաց ու անօրինակ երկիր է միլիտարիզմի: Եւրոպական գեմոկրատիան ոչ մի «կազարմայից» այնքան վախ չունեցաւ, որքան գերմանականն է, ոչ մի «կազարմա» այնքան ծանր ու խեղղիչ կերպով շնոտեց եւրոպական կուլտուրայի, գեմոկրատիայի երազանքների վրայ, որքան յաջող ու մոայլ ձեռվ այդ դերը կատարեց նոյն Գերմանիան:

Փողոքուրդների ամբողջ կեանքն է ի մի օղակւած մեր դարում,—գեղջուկի արօրից մինչև օրէնստուի գրիչը, բանւորի մուրճից մինչև նկարչի վրձինը, —տարբեր կարևորութեան, բայց միանգամայն անհրաժեշտ աստիճաններից մի ահազին սանդուքիք է պետական ողջ շինութիւնը, որի վրայից երթեւկութիւնը հեշտ է և անվտանգ, երբ բոլոր աստիճանները կամ՝ ամենը իւր տեղում, ինամբով պահւած:

Կապիտալիստական կարգերի հարազատ արդաւիք մեր օրերի միլիտարիզմը նման բարդ պահանջներ ունի իւր ոյժի նկատմամբ, ու ով աւելի յաջող կարապետ է այդ ձեր հասարակակարգի, նա էլ—աւելի վտանգաւոր ոյժ է, աւելի յդկւած ներկայացուցիչ միլիտարիզմի:

Իսկ Գերմանիան դերազանցօրէն այդպիսին է անկասկած:

Նրա տարած նոր յաղթանակները, նրա գրաւած գերման սոցիալ-դեմոկրատ Հայնէան նոր

«տարածութիւնն ու անապահովութիւնը» չէին կարող տարակուսանքի առարկայ չը լինել գեմոկրատիայի ու աշխատանքի մեծ սկզբունքների առաքեաների համար:

Նոր յաղթանակները նոր խթանն էին միլիտարիզմի: Ու եթէ անխուսափելի էր այսօրւայ բաղխումը ժողովուրդների, ապա այդ դէպքում թող որ ջախջախւի նա՝ ով աւելի է ուժեղ, աւելի—վտանգաւոր:

Այդպիսիներից էր, ասացինք արդէն, եղածների մէջ առաջին ներթին Գերմանիան ու ընդդէմ Գերմանիայի էլ ողջագուրեցցին մեր երկրի ռամկավար մտաւորականութեան տարրեր թիերը:

Անկարելի կը լինէր երկու խօսք չասել և մանր ազգութիւնների ազատագրման խնդրի առթիւ:

Ճիշտ է միանգամայն „Русск. Вѣд.“ շնորհալի աշխատակից Ժարոտինսկին, երբ նման հարցերը ներկայ պատերազմում համարում է լոկ—“շумихա, չեպուխա, տրուխա“ (աղմուկ, անհեթեթութիւն, անպէտքութիւն): Բայց քանի նա կայ ասպարիզում, մենք անկարող ենք նրա մօտից լուսթեամբ անցնել:

Ի դէպ լինդրի սահմանները մի քիչ որոշենք:

«Գիտականօրէն» իրաւացի է պատմաբանն. Կարէկը, երբ «արևելեան հարց» ասելով՝ հասկանում է միմիայն սլաւոն ժողովուրդների պատագրութեան հարցը, աւելի որոշ՝ նոցա, որոնք տեղաւորւած են տաճկական պետութեան եւրոպական ցամաքի վրայ՝ յոյներ, ոռոմիններ և, ինարկէ, սլաւոններ: Նա ինքն այդ հարցի պատ-

մութիւնը տալիս, լոռւմ է մեր մասին։ Իսկ Պետրոգրադի բարձրագոյն զպլոցներից մէկում, XIX. թորդ դարի «յեղափոխութիւնների պատմութիւնը» զասաւանդելիս, խօսելով այդ նոյն հարցի մասին, կրկին լոռւմ է մեր նկատմամբ ու մեր մի նկատողութեան՝ թէ նա ինչո՞ւ է այդպէս վարում, պատասխանում է, որ՝ ինքը պատմաբան է, իսկ, ըստ իւր կարծիքի, այս հարցի պատմութիւնը ստեղծողներից չենք մենք։ Անգամ խօսելով Ս. Ստեֆանօի և Բերլինի վեհաժողովի արդիւնքների մասին, նա բոլորովին լոռութեամբ է անցնում 61. թորդ յօդւածի մօտից, իսկ 16-ի նկատմամբ թռուցիկ նկատում է, առանց յիշատակելու յօդւածը, որ «բարենորոգութիւններ ինկատի առնւեցան և հայերի համար»¹⁾։

Մենք պատմաբան Ն. Կարէկի կարծիքը բերինք, որպէս սոսկ պատմաբանի. մենք, իհարկէ, նրան չը շփոթեցինք ուսւա մտաւորականութեան ձախ թիի ներկայացուցիչների հետ, որոնց մասին է միայն մեր խօսքը։ Բայց յիշատակած տողերի հեղինակի պէս է մտածել և այդ թիւը՝ Պարզ

1) Տես—Կարեև, Հ. „Իст. Зап. Европы“ հատ. V-ի զլ. III, VII, XVII, XXVI և հատ. VI մ. I-ի զլ. VI և VII. աւելի համառոտ նոյն հեղինակի՝ «Общ. К. Ист. Зап. Евр.» եր. 124, 497—498. Ընթերցողն այս աշխատութիւններում մի երկու անդամ կը հանդիպի, օր., նման դարձւածների, — «Ռուսաստանը կարողացաւ ստանալ զանազան խոսութեար յօդուտ քրիստոնիաների, որոնք մնացել էին նրա (Թիրքիայի—Դ. Ա.) անմիջական հարասակութեան տակ» և այն... Մենք այս ու նման տողերի վրայ կանգ չառանք, որովհետո նոքա անմիջական աղերս չունին մեզ հետ։

է. մենք կարող ենք մի երկու հատ ու կտոր վկայութիւններ բերել նոցա գործերից, բայց այդ խնդրի էութիւնն անկարող պիտի լինի փոխել։

Անժխտելի փաստ է այն մերկ ճշմարտութիւնը, որ ուսւա մտաւորականութեամն¹⁾ «արեւելիան հարցի» նկատմամբ ունեցած հասկացողութեան մէջ մենք գրեթէ տեղ չենք ունեցել։

Բայց չէ որ այսօր մարդկանց ու հասկացողութիւնների հիմնովին յեղաշրջման օրերն ենք ապրում. պահ մի ընդունենք, որ փոխւել են մարդկի և մեր դատի նկատմամբ։

«Ազատարար միսսիան, — նկատում է իւր յօդւածում Ա. Կ. Զիւիլեգեանը, — ինչպէս իւրատեսակի բաղակական ա priori, ծնւել է պատերազմի հետ միասին²⁾։

Ազատարար միսսիան դարձաւ այն մոմենտը պատերազմի, որով հպարտանում է ողջ գիտակից դիմոկրատիկ Ռուսաստանը։ Այդ առաքելութիւնն ունի երեք օրենք։ Սերբիան հարաւում, Լիհաստանը արևմուտքում և Հայաստանը արևելքում։ Սերբիան պիտի ազատագրել Առարտո-Ունգարիայի նւաճողական ուսնաձգութիւններից, լիհաստանը — աւստրօ-գերմանական ճնշումից (Զամուլե), Հայաստանը — սպանիչ տաճկական լիից։ Վերջին երկուսին հարկաւոր է նոյնպէս վերագարձնել ազգային ինքնորոշման իրաւունքը³⁾։

1) Այդպէս չի մտածել, իհարկէ, եւրոպական ուամկավար մտաւորականութիւնը։

2) Ընդգծումը մերն է։ Դ.—Ա.

3) „История нашего времени“, подъ ред. проф. М.

«Պատասխանատու օպպոզիցիայի» «պատասխանատու» իդիոլոգի կարծիքը մենք դիմամբ բերինք, չնայած, որ մեր ինդիք առարկայ մտաւորականութեան շարքերին նա չի պատկանում, բերինք՝ որովհետև բացորոշ այդտեղ մեր մասին էլ է խօսուում։ Մենք այս պատճառի նշանակութիւնը ժխտելու տրամադրութիւնը չունինք, բայց և կը ցանկանայինք, որ արձէքնիրն իրենց սահմանների մէջ մնային։ Անկասկած է, որ այս կէտում մենք չափազանց հնում ենք մեր սեփական հասկացողութիւններն իբրևի մասին։

Ճիշտ է, որ մասնաւորապէս Բալկանիան սլաւոն ժողովուրդների կոճոռոտ զատը մօտ է հղել ուսւ ուամկավար ինտելիգենցիայի ստւար շարքերին։ Ճիշտ է, որ այդ ցաւոտ խնդիրն իրեն է համարել և անարխիստ Բակունինը, և անհամեստ չափաւոր Հերցէնը, և ուսւ մտքի պատկառելի կերառողներից՝ Ն. Կ. Միխայլովսկին։ Հերցէնը Հերցէնին խրատ է կարդացել լեհական հարցի առթիւ, Միխայլովսկին ուսւստաձկական պատերազմի նախօրեակին, 1876-թւին, պատգամել է իւր յետնորդներին, որ «ում ձեռքերով թուղուզում է տապալւի տաձկական տիրապետութիւնը, թէկուզ և արբեցած լրբենու (պյահօյ ծվոլոչ) — արմատական լուծումը սլաւոնական հարցի կը մնայ միծ գործ»²⁾, ու անգամ Բակունինը գեռ

М. Ковалевского и К. А. Тимирязева, вып. тридцать первый, եր. 71.

2) Михайловский, Н. К. Соб. соч. Изд. „Р. Б.“ 1896 г. т. III—852. Քաղ. „Народная Мысль“, № 1. 1915, եր. 51.

1848 թւին Պրագայում՝ Պալացկու նախագահութեամբ կայացած սլաւոնական համագումարի եռանդուն անդամներից մէկն է եղել։

Բայց նոյն չափ սիսալ կը լինէր և այն ենթագրութիւնը, որ, իբր թէ, ուսւ ուամկավար ինտելիգենցիան «արևելիան հարցով», ընդհանրապէս ճնշւած ազգութիւնների ազատագրման խընդրով, ուժեղ ապրել է երբեք։ Մենք վերը շեշտեցինք, որ այդ մտաւորականութիւնն իւր հասարակական զաւանանքով կոսմոպոլիտ է եղել միշտ, ինչպէս կոմմոպոլիտ է նշանաւոր չափով և այսօր։ Նա թէ իւր առօրեայ գործը դարբնելիս ու թէ ապագայի լաւ օրերը կերտելիս մոռացութեան է տւել այդ խնդիրն ու իւր մտահոգութիւնների շրջաններից գուրս համարել Այսօր էլ, Խորի է տեծչի — «կորչէն գերմանացիք» — հին իտալական լոզունգի տիրապետութեան օրերին, «կեցցէն ազգութիւնները» — ուսւ մտաւորականութեան կողմից նոյն ուժգնութեամբ չէ հնչւում ամենեին։ Եւ, վերջապէս, բաւական է յիշատակումն և այն հանգամանքի, որ այսօր «պատերազմական» ստւար գրականութեան մէջ անգամ՝ ուսւ ուսմկասվար ինտելիգենցիան միայն տողեր ունի նւիրած այդ խնդրին, — և ոչ աւելին։

Պատճառներից է և մանր ազգութիւնների ազատագրական տենչերը պատերազմի «ընձեռման» պարզաբանման տեսակէտից, բայց նա անկասկած անշան ու ոչ հրաժայական գործօններից է, և, ընդգծելու է, ոչ բոլոր ազգութիւնների դասն է հաւասար յարգի այդ խափ համար։

Մի վերջին կէտի մասին էլ եթէ մինք մի երկու խօսք ասենք, գրանով գրեթէ սպառած կը լինենք այն պատճառների ցանկը, որը ցուցադրուում է ուսւածառականութեան կողմից կատարւած ուխտազրժութիւնն արդարացնելու գիտաւորութեամբ։ Այդ կէտը գերակշողն է միացածների նկատմամբ ու գրեթէ ամենքն էլ առաջնութիւնը նրան են տալիս։ Վերջապէս այս կէտն է, որ պատճառ հանդիսացաւ ձախ խմբակների նոր ու տարրեր ճիւղաւորման, իսկ առաջին հերթին — «պարտազականութեան» առաջ գալուն։

Բայց թիւրիմացութիւններից խուսափած լինելու համար՝ կանխօրէն երկխօսքով մի անհրաժեշտ բացատրութիւն։ Այն, ինչի մասին մենք քիչ վարը պիտի մի քանի տող գրի առնենք, գրեթէ նոյնն է, ինչ արդէն ասւել է։ Բայց այդ «ընձեռութիւն» է ոչ պատճառների, այլ լոկ հետեւանքների, խնդիրը գրում է այդ գէպքում պայմանական ձևով ոչ ներկայի, այլ սոսկ ապագայի նկատմամբ։ Բանը նրանումն է, որ «ընձեռողների» բանակն իւր ներսում բաժանւած է տարրեր հատւածների ու այն էլ ծանրակիու տարածայնութիւնների առթիւ։ Բոլորն են համաձայն այն կէտում, — որ պիտի դիմագրաւել միլիտարիզմին, պիտի մեղմել գերման ազգիցութիւնը մեր հայրենիքի վրայ, պիտի ընդառաջել մանր ժողովուրդների արդար դատին։ Բայց նոքա հաշտ չեն այն հարցում, — թէ կուից յետոյ ի՞նչ պիտի լինի սեփական երկրի հետ։ Ու այստեղից է, որ սկսում է այսօրւայ տեսակէտների ժխորն, ընդհանրապէս,

ու այստեղից է՝ որ սկիզբն է առնում, մասնաւորապէս, և «ընձեռողների» երկու ճիւղաւորութիւնների շեշտակի բաժանումը։ Վերջիններիս մի հատւածն ընդունում է պատերազմն առանց որևէ պայմանի, բաւ համարելով իրեն համար և հիմնական պատճառների ներկայութիւնն ու նոցա հրահանգիչների։ «Եթէ գաշնակիցների յաղթանակը գերմանացիների վրայ, — գրում է Բուրցեվը, մէկը մտաւորականութեան այդ մասի ամենափայլուն ներկայացուցիչներից, — հնարաւոր է միմիայն սուս ազատագրական շարժման ջախջախման գընով, — փոյթ չէ, թող լինի այգպէս։ Զախջախումը սուս ազատագրական շարժման, եթէ միայն այդ տեղի պիտի ունենայ, գաշնակիցների յաղթութեան զէպքում, չի կարող չը լինել ժամանակաւոր, ու նրա վտանգը չի կարող և ոչ մի զէպքում համեմատւել գերմանիզմի, ասել է թէ — «գիլհելմիզմի» տիրապեսութեան վտանգի հետո¹⁾։

Իսկ «ընձեռողների» բանակի միւս թեն, ընդհակառակը, այն խորը հաւատն ունի, որ լաշնակիցների յաղթութեամբ անհրաժեշտօրէն ընդհանրապէս գեմոկրատիայի լաւ օրերի ուղին է հարթում, իսկ Ռուսաստանի — ողջ հասարակական կառուցւածքի վերածննդի կոչը տրում։ Այստեղ մտնում են՝ թէ տնտեսական, թէ սոցիալ-քաղաքական ու թէ մտաւոր-կուլտուրական գործոններն,

1) Տես այս տեսակէտից «ամսնեկսիոնիստ» Բուրցեվի ուշագրաւ յօւթածը — 196 Նում «Բնչչ»-ի 1916 թ. «Նե սամօборона, ա война до конца».

առանց, իհարկէ, հաւասար կշիռու նշանակութիւն
ունենալու:

Առաջին կէտի, տնտեսական յառաջադիմութեան ու ազատագրման նկատմամբ իւր բարդ հետևանքներով՝ գեռ տեսակէտների խախուտ դրութիւնն է տիրապետում, գեռ հերթաւած չեն մի շարք լուրջ մտածողների լուրջ առարկութիւնները։ Այս խնդրի շուրջն այսօր էլ կրըոտ վէճ է շարուրունակուում ուսմկավար մտքի տարրեր ճիւղաւորուների մէջ ու գեռ վաղն էլ այդ անկասկած է միանգամայն, նա պիտի հանդիսանայ որպէս տարածայնութիւնների ամենաէական «փիլիսոփայական քարերից» մէկը։ Գոյզշտէնեան տընտեսական ժուպելներն այսօր ընդունւում են շատերի կողմից ոչ որպէս զրադեցուցիչ զւարճախօսութիւններ, այլ որպէս իրերի հիւանդագին դրութիւնը ցայտուն ու ճշտօրէն կերպով պատկերացնող մերկացումներ, որոնց ապաքինման նկատմամբ կատարած յապաղումը կարող է ճակատագրական լինել ամբողջ երկրի ապագայի համար։

Մոսկաւյի աղմկող պլրոֆեսուր Գոյզշտէնը՝ ոռու-գերմանական տնտեսական փոխ-յարաբերութիւնների խնդիրն իւր մի շարք աշխատութիւններում ուսումնասիրութեան նիւթ առնելով, գըտնում է՝ որ վայել չէ մեծ պետութեան Գերմանիայի գաղութը լինել, իսկ «ընձեռողներից» յայտնի Պ. Մասլովը՝ գերմանական մաքսային քաղաքանութեան շուրջը տեղի ունեցած տեսակէտների տարրերութեան առթիւ կծու նկատում է Սուխանովին, որ «ուրեմն առ այժմ՝ գիւղացիները կա-

րող են եւ քաղցած մնալ»¹⁾: Խոչպէս տհմում էք՝ վէճը շատ է հետաքրքիր ու խնդիրը շատ բարդ, մանաւանդ, եթէ, ըստ մեր վատ սովորութեան, մոռացութեան չ'տանք և հակառակորդների լուրջ առարկութիւններն այն առթիւ, —որ Գերմանիայի տնտեսական քաղաքականութեան շնորհիւ մեր աշխատաւորը (գիւղացի թէ բանւոր, այդ միւնոյն է) չէ թէ քաղցած, այլ, ընդհակառակը, համեմատաբար կուշտ է մնում, եթէ մենք միայն որոշենք պահ մի խիզախանալ և «կուշտ» խօսքն ընդհանրապէս առանց վերապահութենիրի մեր երկրի աշխատաւորի նկատմամբ ևս գործ ածել։ Դժրախտարար մենք հնարաւորութիւն չունինք գէթ հարկանցիօրէն մօտենալու այս խնդրին, որովհետեւ անգամ թռուցիկ նկատողութիւնը կը խլէր մեզնից առ նւազն մի քանի տասնեակ հրես, որից մենք կատարելապէս զուրկ ենք այսօր։ Ասենք միայն այսքանը, որ Գոյզշտէնը — Մասլովիան (մէկմէկ ընկեռներն էլ են միանում...) բացականչութիւններն անոյժ են եղել մինչ այսօր հերքել գիտականօրէն հաստատւած այն հիմնական ճշմարտութիւնը, որ՝ անզիփական, ֆրանժիական ու բելզիփական «կապիտալը» մեր հայրենիքին ասելի է ծեռնոտու, քանի գերմանական «ֆաբրիկատու»։ որ մեր աշխատաւորը չէ՝ թէ շահում, այլ տուժում է տնտեսապէս, շնորհիւ Գերմանիայի տնտեսական քաղաքականութեան»²⁾։ Այս, ի միջի

1) П. Масловъ. Война и демократія. Москва, 1916, ծանօթ. եր. 11.

2) Յատկապէս այս տեսակէտի հիմնարման առթիւ

այլոց: Դասնանք «ընձեռողներին»:

Վերջիններիս անտեսական վերածննդի ընդհանուր պոստովատները հետեւալներն են:

Կապիտալիստական տնտեսութիւնը, նախչէ թէ միայն բացասական, այլ և խոշոր դրական երկոյթ է, անխուսափելի ու անհրաժեշտ փուլն է տնտեսական յաջող ու ոչ հիւանդու զարգացման, որովհետեւ, երկրորդ՝ միայն նրա լիակատար տիրապետութեան օրօք երկրի առաջ բացւում է նախադուոը «մարդու և քաղաքացու իրաւունքների յայտագրի», իսկ այդ, երրորդ՝ անկարող պիտ լինի իրականանալ մինչ այն, քանի դեռ Ռուսաստանը, իրօք, տնտեսական գաղութն է Գերմանիայի այդ խօսքի ամենալայն իմաստով:

Կարևորն այն չէ, որ այսօր ուղղակի տուժողն առեւրա-տնտեսական փոխ-յարաբերութիւնների ասպարիզում արդիւնաբերողն է ու հողատէր-արտահանողը, այլ նա՝ որ անուղղակի տուժողն ամբողջ երկրն է, երկրի ողջ տնտեսութիւնը, նրա բոլոր խաւերը, իսկ առաջին հերթին ու վերջին հաշուվ, եթէ կուղէք, նրա աշխատաւորական-բան-բանւորական հսկայ բանակը:

Ենթադրում է, որ Գերմանիայի յաղթանակածտէն. —պրոֆ. Պ. Պլացենկո-ի լուրջ ուսումնակիրութիւնը „Օчерки агр. эвол. России“, նոյն հեղինակի նոր սոլիդ աշխատանքը — Зерн. хоз. и хлѣб. отн. Р. и Г. въ связи съ там. обл.“ և „Современ. Миръ-ի № 3-ում Ս. Զագորյակու այս գրքի առթիւ զետեղած քննադատականը: Տես նաև Ն. Սուլիանովի հետաքրքիր գրքոյները—«Наша лѣв. группы и война» և „Почему мы воюемъ“. Հետաքրքական են և „Лѣтопись“ ամսագրի № 3-ները:

Դէպքում «գաղութային շղթաներն» աւելի պիտի սկզմեն, իսկ պարտած դէպքում, ընդհակառակը, Ռուսաստանը հնաւորութիւն պիտի ընձեռի շօշափելի շտկումն մտցնելու իւր տնտեսական ազատագրման ինքորի մէջ¹⁾:

Երկրորդ կէտի (սոցիալ-քաղաքական) նկատմամբ կարծիքների միօրինակութիւնը թէ աւելի է պահպանւած ու թէ աւելի շշտւած:

Աղքամանգրեան (I) պատերազմներից յետոյ դեկարբստների ծնունդն ու մի շարք լիբերալ «խոստումները», Ղրիմի պատերազմից յետոյ մի ամբողջ շրջան «միծ ռեֆորմների», ոուս-ճապոնական աւանտիւրայից յետոյ հոկտեմբերեան... 17-ը... Բայց պատմութեան մէջ այդպէս է եղել գրեթէ միշտ ու գրեթէ ամենուրեք: Միայն XX-րորդ դարի շէմքին աշխարհին ու մարդկութեան նոր խօսք չասած Ասիայի նոմադն յանկարծ եկաւ. Կարծես պատգամներից ամենավեհն աւետելու, դարերի ու

1) Ընդհանրապէս այս կէտի շուրջն այնպիսի ստարգրականութիւն գոյութիւն ունի, որ կատարելապէս անհնար է որեւ աղբեւք մատնանշէն: Այս խնդիրը լուրջ ու հարուստ ուսումնասիրութիւնների նիւթ են զարձրել մանաւանդ բուրժուազական բանակի տնտեսագէտներն ու հրապարագուանները: «Ընձեռողների» արտագրութիւններից մենք կախունները: «Ընձեռողների» արտագրութիւններից մենք կառաջին հերթին կարող ենք մատնանշել.—Պ. Մասլովъ-ի առաջին հերթին կարող ենք մատնանշել.—«Война и демократия», Г. Плехановъ-ի „О войне“ գրը: «Война и демократия», Г. Плехановъ-ի „О войне“ գրը: «Экономическая причина мировой войны» и М. Бернацкий-ի „Экономическая причина мировой войны“ и М. Бернацкий-ի „Экономическая причина мировой войны“ յօդածը զետեղած: „Ист. наш. вр.“ քանից յետութեամբ պատմական և ամսագրերն ու „Народная мысль“-ի խմբական աշխատանքը:

սերունդների երազներից ամենափայլունն իրականացներու,—հնից դէպ նորը տանող ճանապարհն անարիւն հարթելու:

Տաճկական 1908 թւի յուլիսեան աներկիւնք յեղափոխութեան առթիւ էր այդ, «վեխսատների» ծափ ու ծիծաղի երջանիկ օրերին: Բայց... յոխորտ կշտամբանքն ու անհիմն խինդը հնի հասցէին ու նորի առթիւ երկար չը տևեց, ապրիւեան 1909-ի—ու որպիսի ծաղը, մինչ «վեխսատների» յայտնի ժողովածուի երկրորդ հրատարակութիւնը —ձախող ու արիւնոտ օրերն եկան ասելու, որ դեռ հինը շատ է նոր, դեռ վաղ է, շատ վաղ, պատմութիւնն առանց կարմիր գոյնի կերտելու:

Առու ռամկավար մտաւորականութիւնը հաւատ ունէր, որ յատուկ որպէս պատերազմի հետեւանը երկիրը պիտի անէր ուրոշ քայլ դէպ յառաջ ու երբէք դէպի յետ:

Նա ընդունում էր նաև, որ նման օրերին կարող կը լինի ու պարտական է ասպարէզ կանչել երկրի գործոն ոյժերին, նրանց նոր ձեւ ու նոր գոյն տալ մօտիկ լաւ ապագայի համար¹⁾:

Եւ, վերջապէս, երրորդ կէտի (մտաւոր-կուլտուրական) նշանակութիւնն այնքան ուժեղ կերպով չի ընդգծւած, որքան զգացւած է գրեթէ բո-

¹⁾ Տես երկրորդ կէտի առթիւ ցոյց տւած աղբիւրներն ու կարպուտկինի (Բուրցեվի երկիսութով) գըքոյքն «Օ ՅՈՒՆԵ» խորագրով: Աւշագրութեան արժանին են և Թհանչութեան Ա. Մայսկի-ի վերը յիշատակած աշխատութիւնները: Տես նաև—Պելեխանովի «Դնեվնիկ սոցիալ-դեմոկրատ» № 1, մարգսիստների «Самозащита» ժողովածուն և «Рѣчь»-ի № 196-ում Բուրցեվի և Կրապուտկինի յօդւածները:

լորի էլ կողմից, բայց, թերևս, որոշ անյարմարութիւնների՝ գիտական ու գրական ամբողջիայի տեսակչափ խոհեմարտար նրա հիմնովին լուսաբանութիւնը վերապահւած է ապագային:

Մենք այս կարեւոր կէտերի նկատմամբ լուսթիւն պահպանեցինք՝ մասամբ անկախ մեր կամքից, մասամբ էլ մեր բարի ցանկութեամբ: Խօսած դէպը ունք բոլորը չպիտի ասէինք, ինչպէս և իրենք պաշտպանողները չեն ասում, իսկ այն ինչ պիտք է ու կարող ենք ասել՝ թէ շատ է ասւել ու թէ ամբողջ երեսներ կարող է խլել մեզնից, եթէ որոշենք գէթ թուուցիկ կերպով անդրագառնալ գոյութիւն ունեցող թերին ու կարծիքներին: Մենք այսօր այդ այդ գուրս ենք համարում մեր նպատակից:

Ահա այն պատճառները, որոնց առաջ բիչ վերը խոստացանք վերջակէտ դնել: Բայց մի նկատառումով միայն: Մենք տւինք գրեթէ լիւց ցանկն այն բոլորի, ինչ ոսւս մտքի աշխատաւորական ձախ թեն է ասել՝ պարզ ու բացճակատ: Չմոռացանք անշուշտ, որ չաւած խօսք կայ, որն առածից աւելի է հատու, չարձանագրւած պատճառ կայ, որը փաստագրւածից աւելի է ուժեղ:

Անկասկած է, որ այսօրւայ գաղափարական հանգոյցն աւելի է բարդ, քան մինք այդ տւինք:

Սկզբից շեշտեցինք, որ մարդկային գիտական միտքը մինչ այսօր էլ անոյժ է միանգամայն շատ ու շատ առաջնակարգ հասարակական ու անհատական կնճիռների հանդէպ: Դեռ այսօր էլ նա ամենալաւ դէպը ունքում հիպոթեզների աշխարհունակութեան առաջնակարգ գործութեան առաջնակարգ գործութեան առաջնակարգ գործութեան:

իտարհում է ապրում ու այդ աշխարհից միայն իւր ասելիքն ասում: Միթէ պարզ չէ, որ այսօր, եթէ հասարակագիտութեան մի շարք դիրքերը լինէին քիչ ամուր ու պինդ՝ այդ դէպրում աւելի վստահօրէն կարելի կը լինէր պատմական պլատումներն անել ու թիչ ուղիղ եզրակացութիւնների յանդել: Սոցիալական հոգեբանութիւնն ու սոցիալական տրամարանութիւնը մասնաւորապէս որքան խոշոր ու անգնահատելի ծառայութիւն կը մատուցանէին դեռ մթութեան ճիրաններում դեգերող մարդկային որոնող մտքին, եթէ միայն գէթ քիչ-շատ լուրջ փորձեր արւած լինէին այդ ուղղութեամբ ևս, եթէ այսօր ասպարիգում տիրապետող մի շարք հասարակագէտների թոյլ ու վարանոտ քայլերը չը լինէին:

Ահա, օր., ձեզ պատճառներից մէկն ևս, բացայայտ չարձանագրւած դեռ ոռու մտաւորականութեան կողմից, բայց գերազանցորէն ուժեղ ու մղիչ, —ինքնաւզոյութեան ընազդը:

Զէ թէ „օборօհա“-ի անհրաժեշտութիւնը, ոչ այն պաշտպանութիւնը հայրենիքին, որի անունից խօսում են այսօր աջ ու անեակ, այլ մերկ բնազդը, սոսկ ապրելու ու յարատելու անյագուրդ տենչը, սերունդների դարերից ժառանգած այդ առեղծւածային գանձը.

Նա խօսել է թէ ժողովուրդների կեանքում, — թող թէ այդ ժողովուրդը լինի հաշտ համայնակենցաղի կարօտ ոռուը, ու թէ անհատի, — թող թէ այդ անհատն է «չարին բռնութեամբ չը դիմադրող» ևս Տոլստոյը: Խօսել է միշտ՝ երբ գոյու-

թեան վտանգն է ասպարէդ եկել խօսել է այն ժամանակ՝ երբ ապրելու ցանկութիւնն է ի յայտըերեւել:

Ոուս ժողովրդի պատմութեան մէջ այս բնազդն — անսանձ ու անզուսպ — երկու անգամ է խօսել, երբ, իրօք, նրա կեանքը վտանգի է եղել ենթակայ, — բախտորոշող 1812 թւին ու այսօր:

«Ժողովրդական հոգին», այդ անտարրափակ եթերներում վարանող դեռ արօր էութիւնը, — միշտ զգայուն ու միշտ արթուն, — կարծէք նախազգում է՝ թէ երբ կարիքը կայ խօսելու, երբ վտանգն է իրական:

Նա լոեց շատ թւականների ու շատ բազիութեամբ ժառանակ ու խօսեց այսօր, երբ, իրաւ, առժամանակ լուելն երկարատես ու երկունքալից լուսութեամբ կարող էր վերջանալ:

Ազգովին յարատեելու անզիտակ ցանկութիւնն ու նրա իրականապէս վտանգւած լինելը չէին կարող պատերազմի «ընձեռման» պատճառ չ'հանդիսանալ ու հանդիսացան անխուսափելիօրէն:

Մի ուրիշ հանգամանք ևս՝ ոչ պակաս լուրջ, ոչ պակաս հարմայական:

Հայրենիքի գաղափարը, կուրօրէն սէրը դէպ հարազատ հողը:

Մենք սկզբից դիտմամբ այս կէտի առթիւ լուսութիւն պահպանեցինք, որովհետեւ այդ արժէքն աւելի է թանգ, քան այսօր գնահատում ձախ խմբակների գործերի մէջ. աւելի լայն, քան սահմանագծւած է նաև: Ու որքան խրատական հէնց այն մերկ իրողութիւնը, որ ոուս մտաւորականու-

թեան տարբեր հատւածները հաշտ ու սերտ աւելի համարձակ ու որոշ „օօրոնա“-ի գաղափարն տուաջդրեցին, երբ իրենց հայրենիքը բացայաց իրական սպառնալիքի տակ էր գտնւում: «Լսիցէք մեզ այս ճակատագրական ժամին,—ասում էին յայտնի «Կոչի» հեղինակները, — երբ, գրաւելով Ռուսաստանի արևմտեան բերդերը, թշնամին բռնել է նրա հողի նշանաւոր մասն ու սպառնում է Կիեվին, Պետրովուրդին ու Մոսկվային, այսինքն՝ զլիաւոր կենտրոններին նրա հասարակական կեանքի¹⁾» (Ընդգծումը մերն է): Ու այս կոչի տակ իրենց ստորագրութիւններն էին գրել՝ Պլեխանով, Ակսել’րոդ, Բախ, Դէյչ ու Բունակով, Աւկանտ’եվ, Լիւրիմով, Վորոնով, Արգունով և ուրիշները, Մի ամբողջ շքախումբ, մի պատկառելի գումարտակ ազնիւ ու ստեղծագործող մտքի: Բայց համոզւած լինելու չափ թւում է մեզ, որ վերջակէտը կոչի մէջ «Մոսկվայի» մօտ պիտի լինէր գրւած ու ոչ քիչ յետոյ, երբ, կարծէք, այդ քաղաքնիրն ուժեղ պաշտպանութեան կարիքն են զգում, որպէս... երակն երկրի հասարակական կեանքի: Թւած բնակատեղերն աւելի են գրաւիչ, որպէս սիրալ հայրենիքի, — այդ դուրս է կասկածից: Բայց միթէ գրաւիչ ու ձգող չեն և «Ռուսաստանի արևմտեան բերդերը», «նրա հողի նշանաւոր մասը», միթէ այս դէպքում ու հէնց միայն այս դէպքում այդ նոյն ստորագրութիւններով ու

¹⁾ Տես այս առթիւ պ, Պ. Միլիւկովի ուշագրաւ յօդածներն ևս „Քեչ“-ի №№ 188 ու 194-ում «Ներկարական պատառութեամբ»:

նման կոչով հանդէս չէին գայ Պլեխանովներն ու Վորոնովները, եթէ վտանգն իրական լինէր, միթէ նոքա նման պահուն ապաւինած լուրջ տարակուսանքներին ու կասկածներին վերջնական լուծումը հարցի կ'վերապահէին իրերի տարբերային ընթացքին: Պատմութեան իմաստն ու ազգերի երկունքալից թեակոխած դարերն են գալիս ծառանալու նման ենթաղրութեան հնարաւորութեան դէմ: Հայրենիք է զիտակցած հարսազատ երկրի թէ կենտրոնն ու թէ ծայրը. հայրենիքը կարօտ է պաշտպանութեան միշտ և ամենուրեք, երբ, իրօք, նրա զլիին Դամոկլեան սուրն է կախւած, պատրաստ՝ պատեհ ժամին ըստ իւր բմահամ ցանկութեան անդամահատելու նրան: Փորձեցէք խլել ոուս ժողովրդի ձեռքից մի Վորոնեժ կամ Սմոլենսկ, մի Նովգորոդ կամ Տուլա ու խօսք տւէք, որ հանգիստ կը թողնէք նրա հայրենիքի սիրտը, նա, համոզւած ենք մենք, կրկին նոյն վճռականութեամբ կը ծառանայ ձեր դէմ, որովհետեւ խօսողն ու հրահանգողը անդիտակ ու միշտ կենդանի սէրն է դէպ իւր հայրենի վրանն ու կտուրը: Այդպէս չեն մտածի «զեկավարները»՝ այդ փոյթ չէ ամենեին, նման դէպքերում ժողովրդական զանգւածներն են իրենց յետելից քարշատեած գիշերավաներին, ինչպէս այդ տեղի է ունեցել մասամբ և այսօր: «Օօրոնա«-ի գաղափարը շատ է նեղ ու անխուսափելիօրէն յդի մի շարք աւել կամ պակաս կարևոր թիւրիմացութիւններով: Որքան ուզում է թողէք «ներգրամատկալին» սուր ածականով որակի «Լետопիս«-ի

երիտասարդ Ռարեցին Գ. Պէլիսանովը. որքան ուզում են թողէք Զիրիկովսերն ու Խզգոնքսերը փետեն ու դատափետեն նրան՝ այդ միմոյն է, խնդրի էութիւնը չի փոխում դրանից. Անխոցելի պիտի մեայ «տարակուող» Ռարեցը մինչայն, քանի, իրօք, „օօօրոնա“ կը հասկացւի և այն՝ երբ գուք Սարիղամիշի մօտ էք և այն՝ երբ կանգնած էք Երզնկայի պարիսպների տակ. և այն՝ երբ Պրժեմըլլից էք առաջ անցնում ու այն, երբ ձեզ արդէն դէպ Մոսկւա են քշում. Մութ են, շատ յութ՝ „օօօրոնա“, «հասարակական կեանքի գլխաւոր կենտրոններ», հայրենիք—ոչ Շչելդինեան հեղնած «ուչաստկային» մտքով, որի անունից Վ. Զասուլիչն է խօսում „Самозащита“-ի մէջ, —նման դարձւածներն անոյժ պիտի լինեն փրկել ձեզ փափուկ դրութիւնից ու գաղափարական սանկցիա տալ ձեր արածներին:

Մութն է եղել «հայրենիք» հասկացողութիւնը մինչ պատերազմը, մութն է նաև պատերազմի ժամանակ. անորոշութեան քօղով է եղել ծածկւած նաև երեկ, երբ իւր պաշտպանների շարքերում տեսել է մարտնչող գաղափարախօսութեան մի փոքրիկ մասը միայն, անորոշութեան քօղով ծածկւած է նաև այսօր, երբ նրա լուռ կամ խօսուն երկրպագուներից են գրեթէ բոլորը: Բայց պատմութեան փորձութեան ժամերը միշտ եկել են մի բան բարձր ու պարզորոշ ասելու:

Կայ «հայրենիք» գաղափարը, կայ որպէս հարազատ հողի, որպէս արևի տակ մի կտոր ցամաքի վրայ ապրելու սոսկական ազատ իրաւունք,

կայ ու որպէս այպիսին էլ կը յարատեի մինչ այն, քանի գեռ մարդկութիւնը կը մնայ բաժանւած տիրոջ ու տիրողի, հզօրի ու թոյլի, անհայրինիքի ու հայրենիքի ունեցող անարդարացի բանակների: Իոկ այսօր այդ բաժանումների սրագործւած օրիրից մէկն է գերազանցօրէն:

Աղատ սուս-մարդ ապրելու ցանկութիւնն իւր սեփական հողի վրայ շատ էր ուժեղ ու քաղցր, որպէսզի նա կարող լինէր պատերազմի «ընձեռուման» պատճառ չ'հանդիսանալ ու հանդիսացաւ՝ առանց երկար տատանումների:

Մի նուրբ պարագայի մօտից ևս մենք անկարող պիտի լինենք լուռթեամբ անցնել, որովհետեւ, մեր խորը համոզմամբ, նա նոյնպէս իւր գերն է կատարիլ:

Այդ Փրանսիայի դաշնակցութիւնն էր, Փրանսիայի հետ լինելն ընդլէմ ուրիշի եւ ոչ ընդլէմ Փրանսիայի:

Մենք կը ինդրէինք մեզ չը յիշեցնել այն վատ գերը, որը նրա վարիչներն են կատարել Ռուսիայի նկատմամբ: Մենք չենք մոռանում ամենին, որ «գաշնակցութեան» «ուսկեայ կամուրջը», 1888 թւից մեր երկիրը տեղափոխւած Փրանսիական միլիարդներն իրենց սկ հետքերն ունին թողած ուռւս ժողովրդի պատական պատմութեան վրայ: Մենք գիտենք նաև, որ այսօրւայ արհաւիրքն անգամ՝ մի խոշոր չափով նրա մեղքի շնորհիւ է փաթաթւած Ռուսիայի վկին. ինչպէս գիտենք և այն,—որ «շահը» սկզբունք չունի ոչ իւր տանը և ոչ դուրսը, և որ այդ «շահը» ստիպել է և

Ֆրանսիային ուրիշների նման Նեվայի ափերին լինել աւելի հաւատուրաց ու աւելի վանող¹⁾: Գիտենք այդ ու նման շատ բան, բայց անկարող հնք չընդունել, որ ֆրանսիայի թէ հմայքն էր մեծ ու թէ լաւ կողմերը շատ:

Դեռ անմշակ սոցիալական բարդ կնճիռներից է այն պարագան, թէ ինչո՞ւ Անգլիան՝ գրեթէ համայն տիեզերքի սոհմանադրական կարգերի որրանը, մի սքանչելի ներդաշնակութեամբ վարից մինչև վեր գուրգուրւած «օրինականութեան ոգու» երկիրը, «մեծ ազատութիւնների խարտիայի» ու *habeas corpus acta-*ի հայրենիքն ու ազատ և ինքնօրէն դադութների ծնողը չէր կարող, բացարձակօրէն չէր կարող այն թովչութիւնն ունենալ, ինչ կարող էր և ունէր իրօք ըմբռուտ և խիզախ Պարիզն ընդվզութմերի սիրահար մտաւորականի համար: Մուս մտքի ուամկավար թե՛ նկատմամբ Անգլիան գրեթէ միշտ կրթող էր և ոչ ոգեսրող: Այստեղ, թերեւ, անհետեանք չէ անցել Ծովերի Թագուհու անպարտելի ոյժը (չէ որ հզօրը թոյլ ձգողներից է թոյլի պաշտպանների հա-

1) Թէն շատ աննշան, բայց որքան բնորոշ գիծ: Պետրոգրադի պոլ. ինստ. պրոֆեսոր Մ. Ի. Ֆրիդմանը իւր «Винная монополия» կապիտալ աշխատափութեան առաջին մասում նկատում է, թէ ինչպէս ֆինանդիական սէյմը որոշել էր զինեվաճառումը վերացնել երկրում, բայց և ինչպէս Ֆրանսիան Պետրոգրադի միջոցով ստիպել էր խընդիրը վերարոշման ենթարկել, որովհետեւ... Ֆինանդիան վիստորաբար ֆրանսիական գինի է խմում: Սէյմի որոշումը ֆրանսիային պիտի գրկէր որքան յիշում ենք..., մօտ երկու միլիանից...».

մար). գուցէ դեր է կատարել և տրադիցիոն կասկածն երկու երկրների մէջ, և, վերջապէս, Պուրաշովեան ու Ստենկա Ռազինեան հոգեկան շաղախով մկրտւած ուսւա ինտելիգենսիաի սրտին մօտ չէր կարող լինել այդ բարեմասնութիւններից զրեթէ զուրկ անզիլիացին: Ուրիշ էր Պարիզը, Գամերետտաների ու Դանտոնների, Ռոբեսպիերների ու Լամարտինների անհանգիստ հայրենիքը: Զէ որ այստեղ ու սոքա են երկնել մարդկութեան ամենավիճ ու գրաւիչ պատգամները. չէ որ անգամ Մարքոն ու էնգելսը դեռ 1848 թւի սոցիալական յեղափոխութեան ուխտի օրերին մարսել ենզի նւազի տակ Պ. Րիզի այգիներում են տնկել աղատութեան ծառերը. չէ որ այստեղ է առաջին անգամ օրհասական պաշարումի դժնդակ օրերին բարբիկադների բարձունքներից Փրանսիական կոմմունիստը «Կոմմունային» իւր մոլեչին ներբողները ձօնել:

Նուրբ են, շատ նուրբ այս բոլորը, գեռ չապացուցւած ամեննեին, բայց և անկասկած՝ որ նըման նիւանմներն էլ եկել են իրենց լուման մատուցելու մասսայական ուխտադրժութեան ժամին գարբնւող «նոր» հաւատին:

Մենք վերջացրինք:

Ահա պատճառների այն երփներանգ փունջը, տարբեր ակունքներից ու տարբեր ժամանակներում գոյացած այն յորդ յորձանքը, որն եկաւ ստիպելու ուսւա ինտելիգենցիային հրաժեշտ տալ իւր հնօրեայ գիրքերին ու նետւել կողմերից մէկի գիրկը՝ խորթ ու անհամբոյր:

Բայց ինչու այդքան գլխակորոյս արագութեամբ կատարւեց այդ բոլորը, ինչու ապասածից այդքան հապճեպ ու խելայեղ ձեռվ։ Ըստ Վանդելվելէի նկարագրութեան, Եւրոպայում իսկ մի օր անց Աւստրիայի—Սերբիային պատերազմ յայտարարելուց ու երեք օր առաջ Գերմանիայի—Ռուսաստանին՝ Բրիտանիայի միջազգային սոցիալիստական բիւրոյում նստել էին մի սկզբանի շուրջ աւստրիական Ազլերի կողքին անգլիացի Կիր-Հանդին, իսկ ուայիստագի սոցիալիստական ֆրակցիայի նախագահ Հաազէն եղբայրաբար գրկել էր իւր ձեռքով ժոռեսի պարանոցը¹⁾: Տարբեր բովանդակութեան, բայց նման ձեր երեսոյթ էր տեղի ունեցաւ մեր հայրենիքում: Գործադուլային տեսնը, որը սկսել էր ծայր տալ երկրում, յանկարծ մողական գաւազանի մի հարւածով իւր գաղարն առաւ ու մեր ս.-դ.-ներն իսկ սկսեցին Պիտրոգրագի փողոցներում իրենց գովքը կարդալ այն բոլորի հասցէին, ինչ երեկ էին անիծում:

Թւում է, թէ մասնաւորապէս մեզնում այդքան արագ ոյժերի կազմակերպման ու հանդէս գալուն աջակցել էր այն տրամադրութիւնը, որն արդէն 1910 թւից, Տոլստոյի մահանից յետոյ, սկսել էր կամաց-կամաց վարակել ժողովրդի ընդդիմագրի հոսանքների տարբեր խաւերը: «1914 թւին,—միանգամայն իրաւացի կերպով նկատում է Պ. Վիտեազեվը, —Ռուսաստանը շատ բանում ներկայացնում էր 1914 թւականը»²⁾: Ժողովրդա-

1) „Речь“, 1916 թ., № 184.

2) „Народная мысль“, № 1, եր. 59.

կան տրամադրութիւնը նկատելի կերպով բարձրացել էր արդէն պատերազմից անկախ ու նրա մօտալուտին, հասարակական կեանքը նոր փուլի մէջ էր մտել: Ամբարտած ակտուէլ կացութիւնն ու բողոքը սկսել էր արտայայտել գործադուլների միջոցով ու մի շաբք ուրիշ ճանապարհներով, բայց յանկարծ անսպասելիից (ոչ ընդհանրապէս, այլ ժամանակի տեսակէտից) եկաւ պատերազմը, — ինչպէս վերը տեսանք, միանգամայն «ընձեռնի» ուսւ ժողովրդի լայն խաւերի կողմից, — ու նապատրաստ արդէն՝ նետւեց դէպ դիմադրութեան ամենաթոյլ գիծը — պատերազմը:

Պիտի ընդունել, որ այստեղ գեր կատարեց մասամբ և մասսայական խելացնորութիւնը, որից հանրութեան նման անզուսպ ոգեզրութեան ժամերին զերծ են լինում բացառիկ անհատներն ու զբեթէ միշտ ենթակայ ամբոխը, ժողովրդական ստւար շաբքերը:

Իսկ մի անգամ արդէն եղածը կամաց-կամաց սկսեց էլ աւելի ու աւելի զարգանալ և... «Կոչ»-երի ու Պիտիսանովիկան «ՃНЕВНИК»-ների մէջ իւր վերջին խօսքն տսել:

Բայց ունէր արդեօք իրաւունք ուսւ ձախ մտաւորականութիւնը խաղաղալու ներկայ արիւնուստ օրերին այն ներգործօն գերը, որը կամովին ինքն էր ստանձնել:

Ուխտազրժութիւն չէր արգեօք, ուս զիմանագութեան չէր հին սըբութիւնների խորանին և ընտարութիւնը նորի՝ անյայտ ու վտանգաւոր:

Ահա ամենից հետաքրքիր հարցերը, որոնք

անհամբեր իրենց պատասխանին են սպասում, իսկ վաղն անկասկած աղբիւր պիտի ծառայեն նոր գաղափարական բաղխումների, նոր շերտաւորման:

Պատասխանին այդ հարցերին զուրս է մեր ասելիքից, Շեշտենք միայն թեթևակի, որ՝ պարզ է, բացայատ ու անժխտակի, որ ոռւս ուամկավար մտաւորականութիւնն այսօր թողած իւր վաղեմի վրանը՝ մարտնչում է նոր դիրքերի համար ու պատսպարւած է նոր կտուրի տակ:

Պարզ է, որ սոսկ այն պարագան, որ այդ մտաւորականութիւնը պատերազմն ընդունեց որպէս միջոց հաշւեյարդարի, ինքնին բաւական էր հարւածը տալու ծածանող դրօշին, ազգանշանը լինելու՝ որ այսօր երեկուայ ուխտեալների բանակն աւելի նօսրանայ ու խայտաբղէտ դաւնայ:

Պարզ, որ խոր վիճ է փորւել՝ դաւանածի ու արածի, երազածի ու իրականի, կեանքի ու գեռ կեանքից հեռու սկզբունքների սէջ:

Բայց կարո՞ղ էր արդեօք ուրիշ կերպ լինել:

Մի՞թէ այս առաջին անգամն է, երբ ապագայի հասարակակենցաղի ընոյին որոշող իդէալական ուսմունքն իւր հիմանդրութեղբածն է տալիս:

Արդեօք ունի՞նք առհաւատչեալներ, որ այս, եթէ առաջինը չէ, գոնէ վերջինը պիտ լինի:

Դժբախտաբար, և ոչ մէկը դոցանից: Շինուած ու քանդում է այդպէս տենդագին կերպով մեր ներկայութեամբ ու մեր աջակցութեամբ այն, ինչ գաղտուկ գեռ աղբիւրն է մեր պաշտամունքի,

որին բնազդօրէն միշտ անէծք ենք նիւթել: Լաւ թէ վատ՝ այդ գուցէ և վիճելի, բայց ակնբախ է այն, որ կատարւածը թէ բնական է ու «անհրաժեշտ», թէ կենսական ու հասկանալի: Մենք սկզբից ասացինք, որ ոռւս ուամկավար մտաւորականը ձգտել է միշտ անբաժան լինել երեք յատկութիւններից՝ կոլեկտիւթիզմ, կոսմոպոլիտիզմ ու հակաիմպերիալիզմ, —իսկ այսօր տեսնում ենք, որ անգամ այդ մտաւորականն անկարող է դիմագրաւել այն ամենին, ինչ գալիս է կոլեկտիւթիզմը պկիւլայր դնելու, կոսմոպոլիտիզմի վրայ ջուր ածելու ու իմպերիալիզմի գովքն երգելու:

Ճաւ է, բայց և անկասկած, որ մեր մոլորակը դադարել է մոզական գաւազանների բնակավայրը լինելուց: Մարդու անմշակ հոգու խորքերը դարերի ընթացքում ու սերունդների ջանքերով են յդկուում և ոչ նոր վարդապետութեան—թող թէ վաեմ ու կաշառող—մի քանի տասնեակ հազար երկրպագուների ողջակիզման գնով:

Քրիստոնէական կատակոմբներն իսկ անկառող եղան, որ այդ գետնափոր անցքերում պատապարւած նոր հաւատի հալածականները անդաւաճան աշակերտողները մնան նոր խօսքի ու նոր ուսուցչի, —թէ գետնի տակ ու թէ գետնի վրայ, թէ երեկ ու թէ այսօր, Քրիստոսի անունից, բայց միանգամայն հակառակ նրա պատգամներին, ննի անզիտակ ոյժով արին այն, ինչ չը պէտք է անէին («sollen» գերմանական խօսքի բարոյական պարտականութեան իմաստով), բայց ինչ անկառող

էին ու պէտք է անէին (նոյն լեզւի «ուսսե» խօսքի օբ'եկտիւ անհրաժեշտութեան թելաղրանօք): Դուրանն իսկ հանդուրժեց, որ իւր հաւատացեալներից շատերը խուլ մնան դէպ իւր երկնային խոստումներն ու երկրային զոհերը. այսօրւայ աշխատաւորական մասսաների հոծ զանգւածների նոր հաւատն ականատես եղաւ՝ թէ ինչպէս ֆրանսիական սինդիկալիստների բանակում կարող են տեղ գտնել հրէատեացների ստւար շարքերը, ինչպէս բելգիական ս.-դ.-ները կարող են դէմ ելնել ընդհանուր ընտրողական ձայնատութեան, ինչպէս Անգլիայի ու Ամերիկայի կազմակերպւած բանւորութիւնը կարող է պատւար հանդիսանալ դէպ իրենց երկիրը չող այլ ազգութիւնների բանւորներին ու նման շատ դէպեր: Այսօր մէկն է այդ երեսյթներից: «Ի՞նտերնացիոնալի կրիզիսը, — նկատում է Ա. Գիգետաին, — նախ և առաջ ցընցումն է, որպէս հետևանք ոյժերի ցուցահանւած փաստական թուլութեան (ընդգծումը հեղինակինն է — Դ. Ն.): Այդ է առաջին հերթին կրիզիս միամիտ լաւատեսութեան, սոցիալիստական կարողութեան միամիտ վերագնահատման, մասսաների պատրաստակամութեան՝ ստեղծել կեանքի նոր պայմաններ: Կրիզիսի այդ կողմն, իհարկէ, ժամանակաւոր երեսյթ է: Պատերազմն ընդհանրապէս ցոյց տւաւ, թէ որքմն թոյլ է դեռ մարդկութեան հաշտ համագործակցութիւնը, որքան հեշտ-արագ դուրս են պոռտկում կենդանական շրջանի մնացորդները, որքան մակերեսային ու անկայուն է դեռ իսկական ցիւիլիզացիայի շերտը ու

դեռ որքան շատ աշխատանք է հարկաւոր մինչ կարող կը լինի ծնւել մարդկային յարաբելութիւնների նոր աշխարհը, — եղբայրութեան, աշխատանքի ու ազատութեան թագաւորութիւնը¹⁾:

Մեր օրերի անօրինակ ողբերգութիւնն ու համատարած հաւատափոխութիւնը մի աւելորդ անգամ էլ եկան ասելու՝ որ լոկ յոյսերի ու անհող լաւատեսութեան վայր չէ մեր աշխարհը, որ նից դէպ նորը տանող ուղին հարթելը հեշտ չէ այնքան, որ հինը դեռ շատ է ուժեղ, — բայց եւ այդ օրերն եկան ասելու՝ որ նորը պիտի զայ, անպայման պիտի զայ ինչ զնով եւ երբ ուզում է լինի, միայն թէ հարկաւոր է ասելի տոկուն կամք, աւելի յստակ հաւատ, ասելի ուժեղ սէր:

¹⁾ Ibid., եր. 46.

իսկ ինչու հայ մտաւորականութիւնն «ընձեռնեց» պատերազմը։
Արդիօք այսաեղ նոյնպէս կային յարգելի
պատճառներ։

Նա էլ իրօք անխուսափելիօրէն հրաւիրւած
էր պատերազմի պոչից գնալու, անելու այն, ինչ
օրեկտիւ անհրաժեշտութիւնն էր թելադրում։

Մենք դիտմամբ մեր խորհրդակցութիւնների ժամանակ տեղ տւինք նախ տիրապետող ազգի մտաւորականութեան՝ նոր մեր մասին յետագայում խօսելու դիտաւորութեամբ, որովհետև ընդունում ենք՝ որ հայ ինտելիգենցիան ուսւ ումկանում մենք՝ ուժեղ ազդեցութեան տակ է գտնւում։ Աւելին, Այդ տեսակէտից բացառիկ երևոյթներից ենք մենք՝ եթէ լեհերը, ֆիններն ու մասամբ մարդուսները կարող են գրեթէ կարիքը չը զգալ լեզւի ու ոռւս մտքի, որովհետև իրենց ազգուստ լեզւի ու ոռւս մտքի, կարող են ազգերը։ Եթէ էստերն ու լատիշները կարող են ազգեւել ոչ միայն ուսւ ժողովրդից, այլ և իրենց շվեդապատող հարեան ազգութիւններից՝ լինելու գերմանացիներ։ Եթէ կովկասի ու պետութեան մի մանացիներ։ Եթէ կովկասի ու պետութեան շարք ազգութիւններ շնորհիւ իրենց կուլտուրացարքութիւններից՝ լինելու գերմանացիներն ազգութիւններից՝ լինելու գերմանացիներ։ Այդպէս չեն ուսւ մտաւորականութեան հետ, ասել է՝ մէջ չեն ուսւ մտաւորականութեան հետ, ասել է՝ զեռ ազատ են նրա անհամիմատ ուժեղ կուլտուրական ազգեցութիւնից, — այդպէս չենք մենք՝ ըսդ-

հանրապէս ոռւսահպատակ հայերս։ Զարդացման այն աստիճանի վրայ ենք գտնւում ազգովին, որ այլես չենք կարող սերտ շփման մէջ չը լինել ուսւ ժողովրդի հետ, իսկ պահպանելով անհրաժեշտորէն նման կուլտուրական յարաբերութիւններ, մենք կատարելապէս անկարող ենք դիմագրաւել նրա յղկող ու ձուլող ազդեցութեան, որովհետև՝ մեր սեփականը, մեր գիրն ու գրականութիւնը, մեր լեզուն ու դպրոցը գերազանցօրէն անոյժ են մեզ բաւարարել, նոքա մեզ հետ միայն մինչեւ մի որոշ աստիճան կարող են գալ, որից յետոյ մենք առաջ ենք անցնում ճաշակելու բարձր կուլտուրայի պաւողներն ու ձուլելու նոցա հետ, իսկ սեփականը թողնում ենք երեսն ի վայր մեր յետ։

Այդ ազդեցութիւնն ակնբախ էր և ներկայ պատերազմի օրերին։ ինչ եւ ինչու յարգի էր ուսւ մտքի ձախ թեփ համար, այդ նոյնը գրեթէ հրամայական էր և հայ մատառականի նկատմամբ։

Բայց այստեղ էլ կանխօրէն խնդրի սահմաններն որոշենք, Հայ մտառականութիւն ասելով, իհարկէ, մենք չենք մոռանում, որ այդ խաւը նոյնպէս գուներանգ է։ Այստեղ էլ գուք կը հանդիպէք թէ անգոյն ու թէ տարբեր գունաւորութերի տէր մարդկանց, որոնց հիմքները անտարեր խնդիրներից չեն մեր լուսարանութեան ենթակայ հարցի տեսակէտից։ Բայց — պիտի ընդգծել — սահմաններն որոշելը այնքան էլ հեշտ չէ։ Հայ ինտելիգենցիան ըստ մեզ ծանօթ գունանանքների բաժանել՝ ապազգայիններ ու ապաքաղաքացիններ, կղե-

բականներ, լիբերալներ, դաշնակցականներ ու մարքսիստներ — անկարելի է, որովհետեւ այդ հոսանքներից և ոչ մէկը իւր յստակ գէմքով այժմ գոյութիւն չունի հայ կեանքում։ Բաժանել նոցաըստ մոմենտի առաջադրած նպատակների նոյնպէս դժւարին է, որովհետեւ այդ նպատակները շարունակ նկատելի փոփոխութիւնների են եղել ենթակայ պատերազմի ամբողջ ընթացքում։ Ենթակայ պատերազմի մաս և ընդհանրապէս Այդու մենք խնդրին աւելի մօտ և ընդհանրապէս աւելի նպատակայարմար ենք համարում ներկայ գէպքում եւլակէտ ընդունել այն հիմնական գիծը, որը յատուկ է եղել հայ մտառրականին մեր որը յատուկ է եղել հայ մտառրականին միապատմութեան յատկապէս վերջին շրջանում, միապատմութեան անկախ պատերազմից ու նման բացարկացման համարի հանգամանքներից։

Որքան է եղել ինքնուրոյն և որքան ներդում դիրքութիւն է կատարել հայ կիրթ մարդը մեր սեփական միջավայրում։

Ընդունելով որպէս մեկնման կէտ այս յատկանիշը, մենք այդ խաւը բաժանում ենք երեք հատւածի։

ա. հաւատարիմ հպատակներ,

բ. հպատակներ ու

գ. քաղաքացիներ։

«Հաւատարիմ հպատակներ» ասելով՝ մենք հասկանում ենք հայ մտառրականութեան այն հասկանում ենք հայ մտառրականութեան այն շերտը, որը գրեթէ բացասել է ուրոյն ազգային շերտը, որը գրեթէ բացասել է ուրոյն ազգային կեանքի գոյութիւնը, միանգամայն սերտ ու հուկերպով լււել է հանուր պետական նաւին ու կերպով լււել է հանուր պետական նաւին ու կտել՝ որ «ազգի տունը» քանդում են նոքա, որոնք

սեփական ինչոր ազգային իդձեր են առաջարում, որոնք հակառակում են ի վերուստ եկած որևէ հրահանգի:

«Հալատակների» շարքին ենք դասում մենք նոցա, որոնք տրամադիր չեն ժխտելու ազգն ու ազգային կուլտուրական կեանքը, որոնք նաւարկութեամբ գիտեն զբաղւել հարազատ ժողովրդի երազների ավի մօտից միայն (կոլտորո-հազօնալիու կատաջիու պլանաց) ու վախենում են բաց ծովից, որոնք գիտեն իրենց հալատակային պարտականութիւնները ջերմեանդօրէն կատարել, բայց և շատ համեստ սահմաններում ու շատ համեստ լեզուով՝ տէրը լինել իրենց համեստ իրաւունքների:

«Քաղաքացիներ» ասելով, վերջապէս, մենք հասկանում ենք նոցա, որոնք գիտեն մեր ազգային անդաստանի կուլտանը հանդիսանալ ու որոնք իրենց կոչւած են համարում սեփական խօսքն ասելու կեանքի մի շարք ծանրակշիռ խնդիրների նկատմամբ՝ որպէս դռնապանը վաղւայ լաւ օրերի: Այստեղ մենք անկարեսոր ենք համարում այն հանգամանքը, թէ արդեօք նոքա իրենց շինարարական գործի մէջ առաջնակարգ տեղը վերապահում են հանուր պետական կեանքին թէ ազգային օջախին:

Մեզ հետաքրքրում է հայ մտաւորակաւութեան միայն վերջին հատածը:

Թողնեանք մինչ «Մշակի» ձախ թեւ եղած գորշ ու «զգօն» խմբակները հանդիսաւ, — նոքա այսօր մեզ չեն հետաքրքրում: Պատասխանեանք միայն

այն հարցին՝ թէ ինչնւ հայ մտքի ուամկավար հատւածը, հայ կեանքի «քաղաքացիներն» «Ընձեռեցին» պատերազմը:

Բայց այստեղ հէնց մենք սկզբից գալիս ենք խոստովանելու, որ մեր բացատրութիւնը թերի պիտ լինի, որովհետեւ ինդիրը շատ աւելի է դժւար, քան այդ առաջին դէպրումն էր: Հայ մտաւոր խաւի մէջ ոյժերի նկատելի տեղատութիւն է եխաւի մէջ ոյժերի նկատելի տեղատութիւն է նորինիւ, որը մի շատ կարեոր հանգամանքի շնորհիւ, որը միանգամայն բարգացնում է կատարւած խոշոր յեղաշըռումն ու յաճախ նրան անըմբանելի (հեյլումո) դարձնում:

«Ընձեռումը» եղել է տարբեր, նախ մինչեւ թիւրքիայի համաեւրոպական պատերազմին յարելը, եւ երկրորդ—այդ յարումից յետոյ:

Հստ այս կարեոր ժամանակագրական բաժանման էլ մենք մօտենանք հարցին:

Հայ մտաւորականութեան ձախ թեւ նոյն պէս ունեցել է իւր պատերազմը «Ընձեռողներին»: Սոցա մասին,—ուստի թէ հայ՝ այդ միկնոյն է, ինչպէս սկզբից ենք շեշտել, մենք որոշած ունինք ինչպէս սկզբից ենք շեշտել, մենք որոշած ունինք լինալի բայց կատարեալ լուսութիւն պահպանեն եթէ հնարաւոր էր առաջին դէպրում, հայ ինտելիգենցիայի նկատմամբ այդ ուղղակի անհնար է, լիգենցիայի անհրաժեշտ է գոնէ մի երկու խօսք ասել:

«Ընձեռողների» կազմն ուրիշ է եղել մինչ թիւրքիայի մասնակցութիւնը և դարձել է ուրիշ—այդ մասնակցութիւնը հանդէս գալու օրւանից: Հայ աշխատաւորական մտքի մի խմբակն աւելի այստեղ այդպիսիներից համաեւրոպական պատե-

Մենք այս ծայր հետաքրքիր հարցի մասին ժամը գտնիլով անպատճ, անկարող ենք աւելին ասել: Բնդզենք փաստն ու անցնենք առաջ:

Ինչու ընդունեց ազգերի այսօրւայ աշխարհ-
աւեր բաղխումը հայ մտաւորականը մինչ թիւր-
քիայի ասպարէկ նետւելր:

Պատճառների մի խոշոր մասն արդէն մենք

առաջուց հնք տւել: Ընդհանուր աղէտի հանդէպ
հայ ումկավարականը հանդէս եկաւ իւր աշխա-
տաւորական—քաղաքացիական հաւատամքով ու,
գօտեալնդւած սկզբունքային հրահանգների ոյժով,
նա իր ձեռքը մեկնեց ուսւ հաւատակցին՝ միա-
տեղ ծառանալու հանրութեան գլխին պայթած
փորձանիրի դէմ: Քիչ բացառութեամբ ուսւ ինտել-
լիգենցիայի մասին ասածը յարգի է եղել և հայ
մտաւորականի առաջ: Նա եթէ կարող էր անտար-
քեր լինել դէպ գերմանական կուլտուրական ճըն-
շումն ու նման իրեն հետ անմիջական աղիրս չու-
նեցող խնդիրները, ապա կատարելապէս անոյժ
էր նոյն կերպ վարչել, —դէպ ուհակցիոն գերմանա-
կանութիւնը, միլիտարիստական տեսնդը, դէպ հայ-
րենիքի գաղափարը, ինքնապոյութեան ընազդն
ու երկրի վիրածննդի կուը, դէպ Ֆրանսիայի գաշ-
նակցութիւնն ու մանր ազգերին ազդարարած
«ոսկեայ աշխարհների» խոստումները: Նա էլ ցու-
ցահանեց իւր ընդդրկած վարդապետութեան յեղ-
յեղուկ կացութիւնն ու զերծ չը մնաց ըռպէկի
պատրանքներից: Մուած ու մհծացած տիրող ազգի
ծառականն այդ օրերին իւր ուսուցչի լացը լացեց
և որականն այդ օրերին իւր ուսուցչի լացը լացեց:
ու նրա յուրմունքով համակեւց:

Կրապոտկինսերն ու Պետառովոսուլ, ու Քուլցուց հետո մասնաւուն է առաջընթաց կատարեցին:

Հայ «պատասխանատու» ռամկավարականն իւր ազգային զարթօնքի պահուն յղացել է սեփական կեանք ու երազի ծրագիրը, փարթաման կուտուրական հարստութեամբ ու ոչ գերծ՝ և որոշ քաղաքական տարրերից: Սահմանի անդին գտրնող ներհուն տաճկահայը պիտի ապրէր վայել իրեն անցեալին ու ապագային չը ներհակող պայմանների մէջ, նա պիտի իւր վար ու ցանքսի, գիր ու զրքի տէր ու տնօրէնը լինէր, անկաշկանդ—դարբնելու իւր օրն այնպէս, ինչպէս նրան ազատ հայ-մարդ ապրելու, գարգանալու ու զարգացման շրջանը թեակոխելու առողջ բնապդն էր թելադրում: Այդ մտաւորականն երբէք էլ հայի միակատար անկախութեան պատրանքը չ'երկնեց, նա իւր անդամանատւած հայրենիքի երեք բաժններում էլ դաւանեց հոլատակ-քաղաքացուն պատշաճ բանաւոր պարտականութիւնները, բայց և չը գագարեց—վերջին տասնամհակններին մանաւանդ—իւր նախնեաց հողի վրայ ազգային ինքնութեան գաղափարը տիւ ու գիշեր լայնօրէն հրահրել: Ու պարզ է արդէն, —որ այդ մտաւորականի կանոսասն այնտեղ պիտ լինէր, որտեղ նրա երազանքների եզրերն աւելի քիչ էր փշոտ ու անտատասկ, նա իւր երթն այնտեղ պիտ ուղղէր, ուրկից հայի բարեկեցիկ օրւայ աւետն էր գալիս: Այստեղ առաջին ներթին պիտի յիշատակել գերմանիայի բարեկամութիւնը թիւրքիայի հետ ու թշնամական վիրաբերունքը դէպ մեր գատը: Աւելի ճիշտ—Գերման-տաճկական, Վիլհելմ-Համիդեան գրկախառնումը, քան բացասական դիրքը

դէպ բարենսորոգութիւնների կնճռուա խնդիրը: «Հայաստանի գրաւումը Ռուսաստանի կողմից, — զրում է յայտնի Պ. Բորբախը, — նշանակում էր Տաճկաստանի համար սկիզբը վախճանի և այդ պատճառով էլ չէր կարող առանց պատասխանի մնալ մեր կողմից»¹): «Հայաստանը պէտք է մնայ տաճկական, — շարունակում է նոյն տեղում Պ. Բորբախը, — իսկ որովհետեւ մեզ հարկաւոր է աջակցել Տաճկաստանին, քանի այդ հնարաւոր է, այդ պատճառով էլ մենք չենք կարող հանդուրժել, որ պէտքի Հայաստանն անցնի Ռուսաստանի ձևոքը»²), Մենք սահմանափակում ենք միայն Բորբախի յիշատակած տողերը բերելով, որովհետև գտնում ենք, որ նոքա էլ պերճախօս կիրառով տալիս են այն հականայիկական կացութեան պատկերը, որը ստեղծել էր Գերմանիան իլլրզի եղեռնագործ մըթնորբում, շնորհիւ Փոքը Ասիայում Ռուսիայի նորութիւն կենսական մրցակցութեան: Նման հետ ունեցած կենսական մրցակցութեան, նման հետ ունեցած կերպարի մի ամրողջ կուտակ մենք կարող տուայտանքների մի ամրողջ կուտակ մենք կարող ենք զերման քաղաքագէտների գործերից թափել մեր զրքոյկի սակաւաթիւ երեսների վրայ, բայց մեր զրքոյկի սակաւաթիւ երեսների վրայ, բայց գտնում ենք միանգամայն աւելորդ նիւթի նման գանձանքների մի ամրողջ կուտակ մենք կարող տուայտանքների մըթնորբում, որովհետև ինդրի էութիւնը դրածանրաբեռնումը, որովհետև ինդրի էութիւնը դրածանրաբեռնումը, բերելինի քառակիտական հանոցում երկնած Արևելքի առեղղափակիտական հանոցում երկնած Արևելքի առեղղափակիտական հանոցում երկնած Արևելքի թիրեածածիւ կմախքն առանց համեմունքների՝ թիրեած

1) П. Борбахъ. Война и герм. политика. Москва, 1915, кр. 62.

2) Ibid., кр. 64.

ի վիճակի լինի լուսաւորել տիրապետող տեսակների հետևեալ ձևակրպաւմը:

Գերմանիայի հզօրութեան (իմպերիալիզմի) երակն է նրա շահերի շրջանում արդէն տառապող թոյը ու յարատեսող Թիվրիան, իսկ րնդնանրապէս այս կամ՝ այն ծեւի հայկական հարցը, որպէս ընական խողովակը ու սական ոտնձգութիւնների, աւել կամ պակաս խոռվող երեւյթներից է այդ երանելի դրութեան ու այդ պատճառով էլ արժանի Գերմանիայի—ուժեղ ու անսոր դիմադրութեան:

Մինք սեղմ ձեռվ տւինք այն հիմնական փոր-
մուլան, որը տարբեր գունաւորումներով աջ ու
ձախ հոլովում էր գերման ժողովրդի պաշտօնա-
կան ու անպաշտօն վարիչների կողմից և որը
գալիս էր հայ ժողովրդի հակակրանքի զգացումը
պատւաստելու գէպ Ռուբախների ու Լամպրեխտ-
ների, Եյկենների ու Լիստերի գէպ Արենելք աղատ
Ddang-ի կարող հայրենիքը:

Հայի անարդ բախտից Գեղմանիան երբէք էլ
չկարողացաւ Հայաստանը զատել Ռուսաստանից,
նա չկարողացաւ մարսել ռուսական իմպերիալիս-
տական տոչորումներն ու որոշեց... նահատակ
հայ ժողովրդի վրայով կապարեայ հարւածները
տեղալ իւր իսկական ախոյեանի՝ Ռուսիայի գլխին:

Զուտ «հայկական» պատճառների շարքին պիտի դասել անկասկած և Երբեակ Համաձայնութեան խտացրած գեկլարատիւ խոստումները մանր ազգութիւններին աւետած էլգորագօի առթիւ: Կշիռը քիչ էր այս ազդարարութիւնների,

բայց նորա իրենց յատուկ դերը կատարեցին:
Հայ ռամկավար ինտելիգենտի հաւատոյ հանգա-
նակի ուղն ու ծուծը միշտ էլ իւր հայրենիքի ու
հարազատ ժողովրդի անարգիլ զարգացման երազն
է եղել, իսկ այս տեսակէտից ցնորդներով հա-
րուստ պատերազմի սկզբնական օրերը միանգա-
մայն բացառիկ էին: Թւում էր, թէ դաւերի ու
խաբեքայութիւնների շրջանն անցել՝ նոր օրեր են
սկսում—երանաւէտ ու ակնկառոյց:

Այս բոլորով հանդերձ հայ ուսմկավար ստա-
ծողութիւնը պատերազմի սկզբում անհամեմատ
շատ համեստ քանակ տւալ «ընծեռողների», քան
այդ յետոյ պիտի լինէր: Վախը կար ամենի կող-
մից, որ Թիւրքիան կարող է սասնակցել համա-
եւրոպական պատերազմին, իսկ այդ ստիպում էր
լինել շատ զգոյշ ու շրջանկատ: Հայ մտաւրա-
կանութեան եւ ո՛չ մի հատածը կողմնակից չէր
Տանկաստանի միջամտելուն, —ուր եւ երբ ուզում
է լինի, նա դէմ էր յատկապէս կովկասեան
ճակատում տեղի ունենալիք հնարաւոր կուին, —
յաջող թէ անյաջող՝ այդ միենոյն է: Աւելին
ասենք. կան մի շարք ծանրակիր ու անհերքելի
փաստեր, թէ ինչպէս մեր կեանքում զեկավար
գեր կատարող հայ մեծ քաղաքական հոսանքը
գեր կատարող հայ մեծ քաղաքական հոսանքը
ամեն կերպ պատերազմի ուրւականը հե-
ծագտել է ամեն կերպ պատերազմի ուրւականը
ուռ պահել մեր հայրենիքից, արել է բոլորը, ինչ
հնարաւորութեան սահմաններում է եղել միայն
թէ ազգած լինի ժողովրդական հոծ զանգւածների
վրայ նոցա լոյիալութիւնը պահպանած լինելու

գործ ունի կատարած թէ մինչև համաշխարհային պատերազմն ու թէ պատերազմից յետոյ՝ մինչև Թիւրքիայի հանդէս գալը:

1914 թւի հոկտեմբերեան 20-ը միանգամից եկաւ այդ բոլորի վրայ խաչ դնելու:

Թիւրքիան պատերազմող կողմ էր արդէն։ Մեր պատմութեան յղի արիւնոտ անակնականերով շրջանն էր սկսում՝ ժամը շատ էր պատասխանատու, իւրաքանչիւր մի անգոյշ քայլ ճակատագրորէն բախտորոշողը։

